Քաղաքացիների մասնակցություն
Մարդու իրավունքներ
Կանոնակարգված, ազատ և արդարացի ընտրություններ
Հաշվետու լինելու պարտավորություն
Օրենքի գերակայություն
Հավասարություն
Թափանցիկություն
Ուժի չարաշահման վերահսկում
Իրավունքների բիլլ
Բազմակուսակցական համակարգեր
Տնտեսական ազատություն
Քաղաքական հանդուրժողականություն

Ընտրական համակարգերի միջազգային հիմնադրամի
ներկայացուցչություն IFES Վրաստան
Նիկո Նիկոլաձե փ. N7; 0108 Թբիլիսի, Վրաստան
Հեռ. +995 32 2999 309 / Ֆաքս. +995 32 2214 878
www.IFES.org

Քաղաքացիական կրթության ուղեցույց

Քաղաքացիական կրթության ուղեցույցի նպատակն է, որ քաղաքացիները ձեռք բերեն գիտելիք, որպեսզի ավելի լավ հասկանան, ժողովրդավարությունը, Վրաստանում ժողովրդավարության զարգացումը, քաղաքացիների դերը ժողովրդավարական հասարակությունում: Ոմանց համար ուղեցույցը կարող է լինել նախաբան և գիտելիք միանգամայն նոր գաղափարների ուղղությամբ, իսկ ոմանց համար դա կլինի այն թեմաների տեսություն, որոնք նրանց արդեն ծանոթ են: Չնայած այն բանին, թե ժողովրդավարական քաղաքացիության ճանաչողականության որ փուլում եք գտնվում, այնուամենայնիվ այս ուղևորությունը հավանաբար շարունակվի ողջ կյանքի ընթացքում, քանզի ժողովրդավարությանը ուղեկցող գործընթաց է ինչպես մեծագույն ազատության հնարավորությունը, այնպես էլ մեծ պատասխանատվությունները: Ձեզ հարկ կլինի ողջ գիտակցությամբ և սրտով ընդգրկվել այս գործընթացի մեջ և ըմբռնել, թե որքան կարևոր է ձեր դերը երկրում ժողովրդավարության պահպանման և դրա պատշաճ զարգացման համար:

04 › Նախաբան

06 › Մասն I › Անհատ, պետություն և Սահմանադրություն

18 › Մասն II › Մարդու իրավունքներ

24 › Մասն III › Քաղաքացիական հասարակություն և քաղաքացիների մասնակցություն

34 › Մասն IV › Ընտրություններ և ներկայացուցչական ժողովրդավարություն

40 › Մասն V › Գենդերային հավասարության սահմանում և ապահովում

46 › Մասն VI › Մեդիայի դերը ժողովրդավարական հասարակությունում

55 › Ժողովրդավարության սկզբունքներ

58 › Անհրաժեշտ միջոցներ և հղումներ

3

Նախաբան

Իրավամբ մեզ հարկավո՞ր է, թե ոչ կառավարություն: Որո՞նք են լավ կառավարման հիմնական տարրերը: Ի՞նչ է նշանակում մարդու իրավունքներ: Ինչո՞ւ են քաղաքացու իրազեկվածությունը և բնական գործողությունները անհրաժեշտ ժողովրդավարության համար: Ժողովրդավարական քաղաքացիությունը ենթադրո՞ւմ է,արդյոք պատասխանատվություններ քաղաքացու համար: Ի՞նչ սովորություններ և իրավասություններ են հարկավոր ժողովրդավարական հասարակության քաղաքացիներին: Ինչո՞ւ է կարևոր քաղաքացիական կրթությունը:

Վրաստանում, որտեղ քաղաքացիական կրթությունը և ժողովրդավարական հասարակությունը երկարատև ավանդույթներ չունեն, քաղաքացիների գիտակցության բարձրացումը և հասարակության կյանքում նրանց ակտիվ մասնակցությունը վճռական նշանակություն ունեն:

Խորհրդային ժողովրդի ժառանգությունը դեռևս խոր է արմատացած հասարակության մեջ: Խորհրդային ժառանգությունը ենթադրում է այնպիսի երկիր, որտեղ պետությունը և հասարակությունը երկու առանձնացված, միմյանց հակադրված միավորներ են և հիերարխիապես պետությունը հասարակությունից վերև է կանգնած: Վրաստանում քաղաքացիական հասարակությունը հաճախ նույնականացնում են ոչ կառավարական կազմակերպությունների և հիմնականում դրանց անդամների գործունեության հետ: Այն պատճառով, որ հասարակության մեծ մասը ստիպված է պայքարել սոցիալական և տնտեսական հիմնախնդիրների հետ, քաղաքացիները հաճախ չունեն հնարավորություն, ժամանակ և հիմնաորումը, որ իրենց էներգիան ուղղեն դեպի հասարակության հիմնախնդիրների լուծումը:

Վրաստանի ապագան ձեր ձեռքում է: Ապագայում ևս երկրի շարքային քաղաքացիներիդ ազդեցությունը կլինի Վրաստանում ժողովրդավարության զարգացման գործում: Առանց ակտիվ և բարձր գիտակցություն ունեցող քաղաքացիների անհնար է առողջ ժողովրդավարական գործընթացների գործունեությունը: Հնարավոր է, քաղաքացիական կրթության ուղեցույցը ձեր բոլոր հարցերին չպատասխանի, թերևս այն կտա հիմք ավելի լավ գիտակցելու ձեր, որպես Վրաստանի քաղաքացու կարողությունը, ձեր իրավունքները և պարտականությունները, ինչպես նաև այն, թե ինչ իշխանություն ունեք ձեր երկրի ապագայի վրա ազդելու և այն փոփոխելու համար:

Վրաստանում ժողովրդավարության զարգացմանը զուգահեռաբար, Վրաստանի քաղաքացիներին հարկավոր է ձեռք բերել նոր գիտելիք, ունակություն-սովորություններ և վերաբերմունքներ: Այնպիսի ժողովրդավարության պայմաններում, որտեղ քաղաքացիները չունեն այս կարևոր ունակությունները, որոշումներ ընդունելը կարող է տեղի ունենալ միատեսակ վակուումում և արտացոլել մեծամասնության կարծիքը, իսկ անձամբ որոշումը կարող է լինել ոչ այնքան լավը,դեռ ավելին՝ հնարավոր է անգամ հասարակության համար վնասաբեր լինել:

Վրաստանում ժողովրդավարության զարգացմանը զուգահեռաբար, Վրաստանի քաղաքացիներին հարկավոր է ձեռք բերել նոր գիտելիք, ունակություն-հմտություններ և ինքնուրույնություն: Այնպիսի ժողովրդավարության պայմաններում, որտեղ քաղաքացիները չունեն այս կարևոր ունակությունները, որոշումներ ընդունելը կարող է տեղի ունենալ միատեսակ վակուումում և արտացոլել մեծամասնության կարծիքը, իսկ սեփական որոշումը կարող է լինել ոչ այնքան լավը, դեռ ավելին՝ հնարավոր է անգամ հասարակության համար վնասաբեր լինել:

Ընդհանրապես ուսումնասիրողները համաձայնում են, որ առողջ ժողովրդավարության զարգացման գործընթացում քաղաքացիները կարևորագույն դեր են կատարում: Ժողովրդավարական հասարակություններում քաղաքացիներին կոչ են անում ընդունել որոշումներ կամ գործել այն բանի համար, որպեսզի առաջ քաշեն և պաշտպանեն մարդկանց և հասարակության շահերը:

Ժողովրդավարական երկրների մեծամասնությունը հանրապետություն է: Դա անուղղակի ժողովրդավարություն է, որտեղ քաղաքացիները ժողովրդավարորեն ընտրում են ներկայացուցիչ, որը նրանց անունից պետք է ընդունի որոշումներ և կառավարի երկիրը: Այս համակարգի պայմաններում քաղաքացիները, ճիշտ է, ամեն օր ուղղակիորեն ընդգրկված չեն երկրի կառավարման մեջ, թերևս ժողովուրդը, այնուամենայնիվ, ներկայացնում է պետության իշխանության աղբյուրը: Համապատասխանաբար, քաղաքացիները էական դեր են խաղում երկրում ընթացող գործընթացներում, ինչի համար նրանք պետք է ունենան ժողովրդավարական սկզբունքների գիտելիք, կոնկրետ ունակություն-հմտություններ և տրամադրվածություն-վերաբերմունքներ, որոնք կնպաստեն ժողովրդավարության զարգացմանը:

Քաղաքացիական կրթության ուղեցույցի նպատակն է, որ քաղաքացիները ձեռք բերեն գիտելիք, որպեսզի ավելի լավ հասկանան.

- ժողովրդավարությունը,
- Վրաստանում ժողովրդավարության զարգացումը,
- Քաղաքացիների դերը ժողովրդավարական հասարակությունում:

Ոմանց համար ուղեցույցը կարող է լինել նախաբան և գիտելիք միանգամայն նոր գաղափարների ուղղությամբ, իսկ ոմանց համար դա կլինի այն թեմաների տեսություն, որոնք նրանց արդեն ծանոթ են: Չնայած այն բանին, թե ժողովրդավարական քաղաքացիության ճանաչողականության որ փուլում եք գտնվում, այնուամենայնիվ այս ուղևորությունը հավանաբար շարունակվի ողջ կյանքի ընթացքում, քանզի ժողովրդավարությանը ուղեկցող գործընթաց է ինչպես մեծագույն ազատության հնարավորությունը, այնպես էլ մեծ պատասխանատվությունները: Ձեզ հարկ կլինի ողջ գիտակցությամբ և սրտով ընդգրկվել այս գործընթացի մեջ և ըմբռնել, թե որքան կարևոր է ձեր դերը երկրում ժողովրդավարության պահպանման և դրա պատշաճ զարգացման համար:

Մաս I
Անհատ, Պետություն և Սահմանադրություն

Իրավամբ մեզ հարկավո՞ր է, թե ոչ կառավարություն: Ի՞նչն է կառավարության հիմնական նպատակը: Ի՞նչ դեր ունի Սահմանադրությունը:Ինչպե՞ս վարվենք, երբ խախտվում են մարդու իրավունքները: Ինչպիսի՞ն են պետության կառավարման ճյուղերը և պատասխանատվությունները: Որո՞նք են լավ կառավարման հիմնական տարրերը:

Իրավամբ մեզ հարկավո՞ր է, թե ոչ կառավարություն:

Հասարակության մեջ որտե՞ղ են սկսվում և վերջանում մարդու իրավունքները, որտեղ չկան կառավարություն և օրենքներ: Ի՞նչն է սահմանափակում մարդու ազատ գործունեությունը: Օրինակ, այնպիսի պետությունում, որտեղ չկա կառավարություն/ձևական կանոններ, ինչպե՞ս կպաշտպանի մարդը սեփական շահերը:Ի՞նչ մեխանիզմներով մարդը կպաշտպանի սեփական կյանքը: Ի՞նչ տեղի կունենա այն ժամանակ, եթե որևէ մարդու համար անձնական բարօրությունը ավելի արժեքավոր հայտնվի, քան այլ մարդու կյանքի իրավունքը: Անվերահսկելի (բնականորեն ազատ) միջավայրում այսպիսի հարցերին պատասխան տալը կարող է ունենալ վճռական նշանակություն:

Բնական վիճակում անգամ, որտեղ չկան կառավարություն կամ օրենքներ, մարդն ունի հիմնարար իրավունքներ սոսկ այն պատճառով, որ նա ծնվել է (բնական իրավունքներ): Գոյություն ունի այն բանի մեծ հավանականություն, որ բնական իրավիճակի պայմաններում այս իրավունքները ընդհանրապես կորչեն: Մարդկային բնության հակումներից ելնելով, միշտ ի հայտ կգա այնպիսի մարդ, որը հեշտությամբ կհատի սեփական ազատության սահմանները և կփորձի սահմանափակել այլ մարդկանց բնական իրավունքները: Բնական իրավական պետությունում չկա կառավարություն և օրենքի գերակայություն, ինչի հետևանքով մարդկանց հարկ է լինում անձամբ պաշտպանել իրենց բնական իրավունքները: Բազմաթիվ սցենար կարելի է ներկայացնել, թե ինչպես տեղի կունենա նման պայմաններում մարդկանց խաղաղ համակեցությունը և համընդհանուր իրավունքների խախտում և ոչնչացումը: Բնական իրավական (բնական իրավունքների պաշտպանության) պայմաններում գոյություն ունեցող հիմնախնդիրներից ելնելով, տրամաբանական է, որ հասարակությունը ըմբռնեց «օրինական իշխանության հեղինակության» անհրաժեշտությունը: Այս վերջինը կկարողանա լուծել այն հիմնական հիմնախնդիրները, որոնք ի հայտ են գալիս

բնական իրավունքի գոյության պայմաններում: Իշխանությունը այն մեխանիզմն է, որն ունի հնարավորություն ստեղծելու այնպիսի օրենքներ, որոնք հնարավոր կդարձնեն մարդկանց խաղաղ համակեցությունը, կապահովեն անվտանգ և արժանավայել ապրելու պայմաններ հասարակությունում և պետության մեջ:

Բնական իրավիճակ ունեցող պետությունում, որտեղ չկան կառավարություն կամ օրենքներ, երբ մարդու կյանքը, ազատությունը, սեփականությունը կամ ձգտումները ենթարկվում են ռիսկերի, մարդը սկսում է մտածել դրանք պաշտպանելու ուղիների մասին: Ի՞նչ կարող է կատարել մարդն այս դեպքում, որպես անհատ: Հարցը օգնում է մարդկանց ավելի լավ հասկանալ իշխանության գոյության պատճառները: Այն բանի ըմբռնման արդյունքում, որ ամբողջության մեջ հասարակությունը ունակ չէ պաշտպանելու իր անդամների բնական իրավունքները, ի հայտ է գալիս այլ տեսակի ինստիտուցիայի կարիք: Դա պետք է լինի ինստիտուցիա, որը կունենա իշխանություն և հեղինակություն սահմանելու որոշակի կանոններ հասարակության համար: Իրենց հերթին, նման կանոնները ապահովում են կայունություն՝ հասարակության դինամիկ և խաղաղ զարգացմանը զուգընթաց: Անհրաժեշտ կլինի օրենքներ ստեղծել, որոնք կպաշտպանեն ինչպես անձնական, այնպես էլ հասարակության շահերը: Բացի դրանից, այդպիսի ինստիտուցիան պետք է ունենա օրինական իշխանություն և հեղինակություն մի կողմից այն բանի համար, որ ստեղծվեն որոշակի կանոններ, իսկ մյուս կողմից՝ ապահովվի սահմանված կանոնների և օրենքների պաշտպանությունը հասարակության յուրաքանչյուր անդամի կողմից:

Այսպիսով, գնում ենք դեպի այնպիսի օրինական իշխանություն ունեցող հեղինակության գոյության անհրաժեշտությունը, որը կկարողանա միագամայն տարբերվող, առանձին անհատների կամ խմբերի հաճախ արմատապես հակասական շահերը վերակառուցել որպես ընդհանուր հասարակական պետության նպատակ, որը ներդաշնակորեն կհոսի մեկ ուղղությամբ: Քաղաքացիները պետք է զիջեն մի շարք իրավունքներ, որոնցով կպաշտպանեն հասարակական շահերը և կապահովեն անվտանգ և խաղաղ համակեցություն: Դրա լավագույն օրինակներից է այն, որ մարդիկ չունեն ազատություն նրա համար, որպեսզի գողանան որևէ բան իրենց հարևանից: Այս ազատությունը պետության կողմից արգելված է, քանզի այն անօրինական է: Այս հարցի կապակցությամբ 17-րդ դարի փիլիսոփա Ջոն Լոկը ձևակերպեց սոցիալական պայմանագրի տեսության իր տարբերակը:

Ի՞նչն է կառավարության հիմնական նպատակը:

Համաձայն Լոկի, սոցիալական պայմանագիրը անհատների և պետության միջև լավագույն ուղին է այն հիմնախնդիրների լուծման համար, որոնք ի հայտ են գալիս, այսպես կոչված, բնական իրավիճակի ժամանակ: Լոկի փաստարկը կայանում էր հետևյալում. մարդու իրավունքները և սեփականությունը պաշտպանելու համար անհրաժեշտ է, որ մարդը հրաժարվի որոշակի իրավունքներից և

ազատություններից որևէ կառավարչի հեղինակության օգտին: Այսինքն՝ այն բանի համար, որպեսզի բնական իրավիճակում սկզբից ևեթ խուսափել պոտենցիալ քաոսից, մարդիկ համաձայնում են կառավարիչ հեղինակության գոյությանը: Այսպիսի իշխանությանը շնորհված է հեղինակություն և իշխանություն՝ պաշտպանելու մարդու բնական իրավունքները: Սա է սոցիալական պայմանագրի էությունը: Քաղաքացիները համաձայնում են ապրել իշխանության կառավարման պայմաններում, իսկ իշխանությունը պաշտպանում է քաղաքացիների բնական իրավունքները: Լոկի կարծիքով, այնպիսի կառավարությունը, որը չի կարողանա մարդկանց բնական իրավունքները պաշտպանել (խախտում է պայմանագիրը), հնարավոր է հրաժարվի կառավարումից կամ փոփոխվի, քանզի նրան կառավարման իրավունք շնորհվել է ճիշտ ժողովրդի համաձայնության հիման վրա:

Լոկը երևույթների զարգացումը տեսնում էր հետևյալ հաջորդականությամբ. բնական իրավիճակից դուրս գալու համար հասարակությունը համաձայնեց ստեղծել հեղինակություն, այսինքն՝ կառավարում, արդյունքում այս վերջինի խնդիրները դարձան հասարակության կառավարումը և դրա անվտանգության պաշտպանությունը: Համաձայնությունը կարիք էր զգում կառավարիչների օրինականացման այնպես, որ նրանք իրավունք ունենային դիմելու հասարակությանը, սահմանելու պարտադիր կանոններ հասարակության յուրաքանչյուր անդամի համար, ապահովելու կանոնների և օրենքների պաշտպանություն և գործադրում:

Այս պայմանների վրա հենվելով, մարդիկ կամավորապես համաձայնում են զիջել և հրաժարվել որոշակի բնական իրավունքներից, ինչպիսիք են. ազատությունը, իրավունքները և սեփականությունը, ինչն իր հերթին կառավարող իշխանությանը տվեց հասարակությանը կառավարելու հնարավորություն: Քաղաքացիների կողմից սեփական իրավունքներից և սեփականությունից հրաժարվելու ամենավառ օրինակներից մեկը այն է, ինչը քաղաքացիների մեծամասնությունը ամեն օր կատարում է՝ դա է հարկերի վճարումը: Որպես երկրորդ օրինակ կարող ենք բերել այն, որ ռասիստ կամ բռնակալ մարդը ազատ չէ և իրավունք չունի անպատվություն հասցնել այլ մարդու նրա մաշկի գույնի, կրոնի, ազգային պատկանելության կամ այլ պատճառներով: Մարդու ազատությունը բռնություն գործելու կամ խտրականություն անելու համար սահմանափակ է:

Կառավարությունները կառավարում են միայն այն պատճառով, որ նրանց կառավարելու իշխանություն անձամբ հասարակությունն է տալիս սեփական իրավունքները, սեփականությունը և ազատությունները զիջելու հաշվին:

Ի՞նչ դեր ունի Սահմանադրությունը:

Սահմանադրությունը միաժամանակ օրենսդիր և քաղաքական բնույթի գլխավոր փաստաթուղթն է: Այն ունի իրավասություն կարգավորելու ամենանշանակալից սոցիալական և քաղաքական հարցերը, որոնք վերջին հաշվով սահմանում են

հասարակության կյանքի կարգը: Համապատասխանաբար, իշխանությունը և պատասխանատվությունները պետության բոլոր մակարդակներով, լինի դա խորհրդարանային, նախագահական, թե դատական, կարգավորվում են Սահմանադրության կողմից: Սահմանադրական կարգավորումները և համաձայնությունները սահմանում և հավասարակշռում են հասարակության արժեքները, որպեսզի ապահովված լինեն յուրաքանչյուր անձնավորության և քաղաքացու անվտանգ և արժանապատիվ կյանքը նրա իրավունքների և ազատությունների պաշտպանությամբ:

Սահմանադրությունը փաստաթուղթ է, որը կարգավորում է ազատության, հավասարության և կարգապահության միջև ներդաշնակությունը և հավասարակշռությունը այնպես, որ պաշտպանված լինեն մարդկանց իրավունքները և հիմնարար ազատությունները: **Երբ կառավարությունը անհամանձակ է սեփական ազգությունների, այլ նրա մոտ անհամանձակ է այլ մարդկանց նեղելու հանրավորությունը:** Բոլոր թվարկած պատճառները Սահմանադրությունը վեր են ածում երկրի գերագույն օրենքի, որը սահմանում է մարդկանց և ժողովրդավարական պետությունների հիմնական փոխադարձ հարգանքը:

Վրացի պետական գործիչները և հանրային դեմքերը պատասխանատու են Սահմանադրության պաշտպանության համար: Սահմանադրության խախտումը կարող է դառնալ նախագահի, կառավարության անդամների, Գերագույն դատարանի ղեկավարի, գլխավոր դատախազի, պետական աուդիտորական ծառայության պետի, Վրաստանի Ազգային բանկի ղեկավարության իմպիչմենտի հիմքերից մեկը, եթե իմպիչմենտի պահանջով դիմեն համապատասխան վերադաս գերատեսչություններին:

Վրաստանի գործող Սահմանադրությունը պատասխանում է գլխավոր հարցին, թե ով է երկրում պետական հեղինակությունը: Սահմանադրության համապատասխան ժողովուրդը իշխանության աղբյուրն է և հեղինակությունն էլ ճիշտ ժողովուրդն է ներկայացնում:

«Վրաստանում իշխանության աղբյուրը ժողովուրդն է: Պետական իշխանությունն իրականացվում է Սահմանադրությամբ սահմանված շրջանակներում»: Վրաստանի Սահմանադրություն, Հոդված 5.1

Ինչպե՞ս վարվենք, երբ խախտվում են մարդու իրավունքները:

Մարդու իրավունքների խախտման դեպքում գոյություն ունի միջազգային միջոց նրա համար, որ ցանկացած քաղաքացի իր անձը պաշտպանելու նպատակով դիմի՝ դատարան, օմբուդսմենի գրասենյակ (Վրաստանի ժողովրդական պաշտպան), մեդիային կամ մարդու իրավունքների հարցով գործող ոչկառավարական կազմակերպությանը: Մարդու իրավունքների պաշտպանության

տեսանկյունից օմբուդսմենի գրասենյակը (Վրաստանի ժողովրդական պաշտպան) քաղաքացիներին առաջարկում է բազմակողմանի ծառայություններ: Ժողովրդական պաշտպանը[1] (օմբուդսմենը) հանդիսանում է սահմանադրական ինստիտուտ, որը վերահսկում է մարդու իրավունքների պաշտպանությունը և ազատությունները Վրաստանի տարածքի վրա, բացահայտում է խախտումների փաստերը և դյուրացնում է խախտված իրավունքների վերականգնումը: Այն դեպքում, եթե քաղաքացու սեփական կամ որևէ այլ քաղաքացու իրավունքները և ազատությունները խախտվել են կամ գտնվում են խախտման գործընթացում, որը նախատեսված է Վրաստանի Սահմանադրությամբ կամ/և օրենսդրությամբ, ինչպես նաև միջազգային պայմանագրերով և համաձայնագրերով, քաղաքացին կարող է դիմել ժողովրդական պաշտպանին իրավիճակը շտկելու նպատակով: Իրավախախտում կարող է տեղի ունենալ կառավարության պաշտոնյաների, պետական գերատեսչությունների ներկայացուցիչների, ոչ կառավարական կազմակերպությունների, ձեռնարկությունների, պաշտոնյա անձանց, իրավաբանական հիմնարկությունների, տեղական ինքնակառավարման մարմինների և պետական գերատեսչությունների կողմից:

Թերևս քաղաքացիները նաև պետք է գիտենան, որ ժողովրդական պաշտպանը չի քննարկի դիմումը կամ հայցը, որի մասին նա արդեն ընդունել է որոշում, բացի այն դեպքից, եթե ներկայացված չեն լինի տարբեր փաստեր և պարագաներ հայցի կապակցությամբ.

Եթե քաղաքացու իրավունքները խախտվել են, ժողովրդական պաշտպանը կարող է.

- Ուղարկել հանձնարարական պետական մարմիններ, պաշտոնյա և իրավական անձանց, որոնց կողմից էլ խախտվել են քաղաքացու իրավունքները,
- Եթե ժողովրդական պաշտպանը գտնում է, որ կարող է պատահի հանցանք է տեղի ունեցել, նա կարող է իր ձեռքին եղած նյութը մտցնել հետաքննական բաժանմունք,
- Մտցնել առաջարկություններ համապատասխան գործակալություններ կարգապահական կամ վարչական ընթացակարգերի կապակցությամբ այն աշխատակիցների նկատմամբ, որոնց գործունեությունն էլ խախտել է մարդու իրավունքները և ազատությունները,
- Տեղեկացնել զանգվածային լրատվամիջոցներին մարդու իրավունքների և ազատությունների խախտումների մասին,
- Հրապարակել մարդու իրավունքների խախտման մասին տեղեկատվություն հատուկ և ամենամյա զեկույցներում:

Ժողովրդական պաշտպանի ծառայությունը քաղաքացիների համար անվճար է:

Քաղաքացիները կարող են նաև դիմել մարդու իրավունքների պաշտպան ոչ կառավարական կազմակերպություններին: Նմանօրինակ կազմակերպություններից է Վրաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիան (ՎԵԻԱ)[2]: ՎԵԻԱ-ի

[1] www.ombudsman.ge
[2] www.gyla.ge

իրավաբանները շահառուների (բենեֆիցիարների) համար անց են կացնում իրավաբանական խորհրդատվություններ մարդու իրավունքների պաշտպանության հարցերի կապակցությամբ, պատրաստում են հայցեր և պաշտպանում են դիմողի շահերը մարդու իրավունքների եվրոպական դատարանում (ECHR):

2004 թվականից ՎԵԻԱ-ն իրականացնում է ռազմավարական իրավական վարույթ մարդու իրավունքների եվրոպական դատարանում կալանավորների հալածանքների, ոչմարդասիրական և ստորացուցիչ վերաբերմունքի, անօրեն ձերբակալությունների, արդարացի դատավարության, խտրականության և սեփականության իրավունքների խախտման հարցերով:

Ինչպիսի՞ն են պետության կառավարման ճյուղերը և պատասխանատվությունները:

Հասարակության ժամանակակից կառավարիչը, իշխանությունը ընդունում է օրենքներ, որոնք անվտանգության հետ միասին պետք է պաշտպանեն հասարակության արժանապատվությունը և բարօրությունը: Իշխանությունը պետք է պաշտպանի **ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ** այնպիսի երկու արժեքների միջև ներդաշնակության պահպանմամբ, ինչպիսիք են **ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ** և **ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆԸ:** Իշխանությունը կենտրոնացած պետք է լինի այնպիսի օրենսդրության ստեղծման վրա, որը կպաշտպանի բանական հավասարակշռությունը ազատության, հավասարության և կարգապահության միջև: Ինչպես նաև պետք է նշվի, որ այս արժեքների միջև կատարյալ հավասարակշռության պաշտպանությունը գլխավոր դժվար կացություններից մեկն է ժամանակակից պետությունների, իշխանության, հասարակության և քաղաքացիների համար: Այսպիսի հարաբերության բնույթը շատ բանով կախված է օրենսդրության գոյությունից և իրականացումից, թերևս գլխավոր պատասխանատվությունը այս հավասարակշռությանը հասնելու մեջ այնուամենայնիվ, դրվում է քաղաքացիների վրա: Իշխանությունների կողմից լավ օրենքների ընդունումը և դրանց պատշաճ իմպլեմենտացիան (իրականացումը) նույնպես նշանակալիորեն կախված է գործընթացում քաղաքացիների ակտիվ մասնակցությունից և ընդգրկվածությունից: Ընդհանուր առմամբ, օրենքի պաշտպանությունը պարտադիր է բոլորի համար չնայած այն բանին, թե ինչ վերաբերմունք ունի այս կամ այն անձնավորությունը կոնկրետ օրենքի նկատմամբ: Կանոնների, այսինքն՝ օրենքների միասնությունը ստեղծում է կառավարող օրենք:

Երբ 18-րդ դարում ամերիկացիները ստեղծում էին իրենց Սահմանադրությունը, նրանք կիրառեցին բավականին արդյունավետ գործիք այն բանի համար, որպեսզի սկզբից ևեթ խուսափեին իշխանության չարաշահումից: Այս գործիքը ուժերի բաշխումն էր, ինչը ենթադրում է իշխանության, հեղինակության և պատասխանատվությունների սահմանադրական բաշխումը պետության երեք ճյուղերի միջև. **ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ** (Ամերիկայում դա կոնգրեսն է, իսկ Վրաստանում՝ խորհրդարանը), **ԳՈՐԾԱԴԻՐ** (Պետության հրամանատարը, հիմնականում



նախագահը կամ վարչապետը) և **Դատարանը** (դատական համակարգը): Այս բաժանման համար վճռական էր օրենքում «Ստուգման և հավասարակշռման» համակարգի մտցնումը, ինչը ենթադրում է, որ յուրաքանչյուր ճյուղ հավասարակշռում է այլ ճյուղերի իշխանությունը և վերահսկում է իշխանության չարաշահման դեպքերը: «Ստուգման և հավասարակշռման» ուժեղ համակարգը այն ուղիներից մեկն է, որի միջոցով ամերիկացիները կարողացան պաշտպանվել երկրում դաժանությունից և իշխանության չարաշահումներից: Օրինակ,այն օրենքը, որը կընդունի կոնգրեսը, նախագահը կարող արգելք (վետո) դնել: Եվ անգամ այն ժամանակ, եթե նախագահը և կոնգրեսը կաջակցեն այս կամ այն օրենքին, դատարանը այնուամենայնիվ կարող է որոշել, որ այս օրենքը հակասահմանադրական է: Քաղաքացիները կարևոր դեր են խաղում «Ստուգման և հավասարակշռման» համակարգի համապատասխան գործունեության ապահովման համար և բարձրաձայն ասում են, երբ դա այդպես տեղի չի ունենում: Պետական կառուցվածքի նույն սկզբունքն է ընդունում Վրաստանում գոյություն ունեցող Սահմանադրությունը: Վրաստանի պետական կառավարման բաշխման մասին տեղեկատվությունը տեսեք ստորև ներկայացված սյունակում:

Վրաստանի պետության կառավարման Սահմանադրությամբ սահմանված ճյուղերը

*Արտացոլված են Սահմանադրության մեջ մտցված վերջին փոփոխությունները, որոնք ուժի մեջ մտան 2013 թվականի նախագահական ընտրություններից հետո:
* Փորձագետները հենվում են Սահմանադրության վրա և ըստ անհրաժեշտությունների կատարում են իրենց մեկնաբանությունը:

Խորհրդարան (Վրաստանի Սահմանադրություն, Հոդվածներ՝ 48, 63, 80, 81)

- Երկրի բարձրագույն ներկայացուցչական մարմին,
- Ունի օրենսդրական իշխանություն,
- Որոշում է պետության ներքին և արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունները,
- Ունի կառավարության իմպիչմենտի իրավասություն,
- Ընտրված է ընդհանուր, հավասար և ուղղակի ընտրություններով և պատասխանատու է ժողովրդի առջև:



Վարչապետ (Վրաստանի Սահմանադրություն, Հոդված 79)

- Կառավարության հրամանատար,
- Վարչապետը որոշում է կառավարության գործունեության ուղղությունները, կազմակերպում է կառավարության գործունեությունը, իրականացնում է կառավարության անդամների գործունեության համակարգում և վերահսկում,
- Վարչապետը կառավարության անդամներին (նախարարներին) պաշտոնի

է նշանակում նախագահի համաձայնությամբ, ինչպես նաև իրավասու է պաշտոնից ազատելու կառավարության անդամներին,
- Վարչապետի թեկնածությունը խորհրդարանի մեծամասնությունը ներկայացնում է նախագահին: Իր հերթին նախագահը նշանակում է ընտրված թեկնածուին խորհրդարանում քվեարկության նպատակով:Խորհրդարանը հաստատում կամ մերժում է թեկնածուի նշանակումը, Վարչապետը պատասխանատու է խորհրդարանի առջև:

Նախագահ (Վրաստանի Սահմանադրություն, Հոդված 69)

- Նախագահը Վրաստանի պետության հրամանատարն է, երկրի միասնության և ազգային անկախության երաշխիքը,
- Նախագահը զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատարն է,
- Նախագահը ներկայացնում է Վրաստանը արտաքին հարաբերություններում,
- Ընտրված է ընդհանուր, հավասար և ուղղակի ընտրություններով և պատասխանատու է ժողովրդի առջև:

Դատական իշխանություն (դատարաններ)
(Վրաստանի Սահմանադրություն, Հոդվածներ՝ 82, 84)

- Դատական իշխանությունը անկախ է և այն իրականացնում են միայն դատարանները,
- Դատական ակտերը պարտադիր են բոլոր պետական մարմինների և անձանց համար երկրի ողջ տարածքով,
- Դատավորն անկախ է իր գործողություններում և գործում է միայն Սահմանադրությամբ և օրենքով նախատեսված նորմերի շրջանակներում,
- Ցանկացած տեսակի ճնշում դատավորին կամ միջամտություն նրա գործունեությանը նրա որոշման վրա ազդեցություն գործելու նպատակով արգելված է և պատժվում է օրենքով:

Սահմանադրական դատարան (Վրաստանի Սահմանադրություն, Հոդված 89)

- Սահմանադրական վեճերը քննարկող մարմին,
- Ընդունում է որոշումներ Սահմանադրության, Սահմանադրական համաձայնության, օրենքների, քաղաքացիական միավորումների մասին,
- Քննարկում է հանրաքվեի և ընտրությունների կարգավորիչ նորմերի այս նորմերի հիման վրա անցկացված ընտրությունների (հանրաքվեի) սահմանադրականության հետ կապված վեճը,
- Քննարկում է պետական մարմինների միջև իրավասության մասին վեճը,
- Քննարկում է միջազգային պայմանագրերի և համաձայնագրերի սահմանադրականության հարցը,
- Անձի հայցի հիման վրա քննարկում է նորմատիվային ակտերի սահմանադրականությունը Վրաստանի Սահմանադրության երկրորդ գլխով

ճանաչված մարդու հիմնական իրավունքների և ազատությունների նկատմամբ,

- Սահմանադրական դատարանի որոշումը վերջնական է: Ոչսահմանադրական ճանաչված նորմատիվային ակտը կամ նրա մասը կորցնում է իրավաբանական ուժը Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման հրապարակման պահից սկսած:

Գերագույն դատարան (Վրաստանի Սահմանադրություն, Հոդված 90)

- Գերագույն դատարանը գերագույն վճռաբեկ դատարանն է Վրաստանում, որի բոլոր որոշումները վերջնական են:

Այն ժամանակ, երբ պետության յուրաքանչյուր ճյուղ գործադրում է ստանձնած պարտականությունը շնորհված իշխանության շրջանակներում, փոխվերահսկողության մեխանիզմը գործում է ակտիվորեն, որը իր հերթին հենվում է պետությունում իշխանության վերաբաշխան սկզբունքի վրա: Այս սկզբունքի համաձայն, պետության ոչ մի ճյուղ չունի իրավունք և հնարավորություն կատարելու այլ ճյուղին շնորհված գործառույթները և իրավունք-պարտականությունները:

«Պետական իշխանություն իրականացվում է, հենվելով իշխանության բաշխման սկզբունքի վրա»: (Վրաստանի Սահմանադրություն, Հոդված 5.4)

Որո՞նք են լավ կառավարման հիմնական տարրերը:

Լավ կառավարման նշանակալից տարրերը միավորում են հետևյալ սկզբունքները. **ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ, ՕՐԵՆՔԻ ԳԵՐԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ, ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆ, ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ և ՀԱՄԱՋԱՅՆՈՒԹՅՈՒՆ:**

Մասնակցությունը ենթադրում է, որ հասարակության յուրաքանչյուր անդամ ունի հնարավորություն մասնակցություն ունենալու երկրի համար կարևոր քաղաքական որոշումներ ընդունելու գործընթացին, ինչը իր հերթին պարունակում է. ընտրական ներկայացուցիչների ընտրություն (ներկայացուցչական ժողովրդավարության դեպքում), մասնակցություն հանրաքվեին, հանրային բանավեճերին այնպես, ինչպես անձամբ օրենսդրական գործընթացում (ճիշտ է քաղաքացիները անձամբ չեն ստեղծում օրենքներ, սակայն ժողովրդավարական հասարակության պայմաններում ընդունված է, որ քաղաքացիները կապվում են իրենց կողմից ընտրված ներկայացուցիչներին և արտահայտում են իրենց կարծիքները օրինագծի կապակցությամբ, որը վերջին հաշվով կամ ընդունում են կամ ոչ: Այսպիսի մասնակցության կարևոր բաղկացուցիչներից մեկն այն է, որ քաղաքացիները լավ պետք է լինեն տեղեկացված այն օրինագծերի մասին, որոնց խորհրդարանը քննարկում է և դրա հետ միասին պետք է ունենան բավարար ժամանակ, որպեսզի արտահայտեն իրենց կարծիքը նշված կապակցությամբ): Մասնակցության

այսպիսի ձևերի գործողության պայմաններում, յուրաքանչյուր քաղաքացի պետք է ունենա այնպիսի ապրումներ, որ ինքը պատկանում է այս պետությանը:

Օրենքի գերակայությունը հիմնում է օրինահնազանցություն պետության մեջ, որտեղ քաղաքացու և պետության միջև հարաբերության և պետության կառավարման ճյուղերի գործառույթների հիմքը օրենսդրությունն է: Ոչ մի մարդ կանգնած չէ օրենքից բարձր: Երբ մեծամասնության ցանկությամբ իշխանություն են գալիս պաշտոնյա անձինք՝ ժողովրդավարությունը պետք է ապահովի այն, որ կառավարությունը և դատարանը բավարար երաշխիքների հիման վրա պաշտպանեն յուրաքանչյուր մարդու իրավունքները, հատկապես փոքրամասնությունների իրավունքները, որոնց պաշտպանությունը նախատեսում է Վրաստանի օրենսդրությունը:

Թափանցիկությունը ենթադրում է այն, որ պետության կողմից ընդունված որոշումների և կատարած ծախսերի մասին տեղեկատվությունը քաղաքացիների համար պետք է լինի մատչելի և հասկանալի: Որոշում ընդունելու գործընթացը, ինչպես նաև դրա իրականացման մեթոդները հասարակության համար պետք է լինեն հրապարակային:

Հաշվետու լինելու պարտականությունը պետության պատասխանատվությունն է հաշվետվություն հանձնել քաղաքացիներին և կազմակերպություններին կատարած տարբեր աշխատանքների, ապագա պլանների և խնդիրների մասին: Դա ենթադրում է նաև այն, որ պետության մեջ գործում են օրինական համակարգեր և հիմնարկություններ, որոնք արձագանքում են անօրեն գործողությունների վրա:

Հանձնայնության վրա ուշադրության կենտրոնացումը պահանջում է որոշումներ, որոնք ուղղված են հասարակության մեջ գոյություն ունեցող տարակարծությունների ունկնդրմանը և հաշվի առնելուն, դրա հետ միասին պահանջում են որոշում ընդունելու գործընթացում հավասարակշռության և ամբողջականության պահպանության անհրաժեշտություն: ■

Պետությունը պարտավոր է պաշտպանել մեր իրավունքները. պաշտպանել մեր կյանքը, արժանապատվությունը և անձնական անձեռնմխելիությունը, ապահովել տեղաշարժի ազատություն, օժանդակել ազատ և հավասար պայմաններում կրթություն ստանալուն և ստեղծել այնպիսի միջավայր, որտեղ այս իրավունքների իրականացումը հնարավոր լինի առանց խտրականության:

M
A





Բաժին II
Մարդու իրավունքներ

Ի՞նչ է նշանակում մարդու իրավունքներ: Ի՞նչ պարտավորություններ են դրված պետության վրա: Պետությանն կողմից ինչպե՞ս պետք է պաշտպանված լինեն ազգային և էթնիկ փոքրամասնությունների իրավունքները:

Ի՞նչ է նշանակում մարդու իրավունքներ:

Անհատի լույս աշխարհ գալու հետ միասին նրան արդեն շնորհված են որոշակի իրավունքներ: Մարդու իրավունքները միատեսակ են երկրագնդի ցանկացած կետում ապրելու համար: Յուրաքանչյուր անձ չնայած այնպիսի տարբերություններին, ինչպիսիք են ռասսան, մաշկի գույնը, սեռը, լեզուն, դավանանքը, քաղաքական և այլ տեսակի կարծիքները, ազգային կամ սոցիալական ծագումը, սեփականությունը, տիտղոսը և այլն պաշտպանված է: Մարդու իրավունքները համընդհանուր են և անխտիր տարածվում են բոլոր անձանց վրա:

Միավորված ազգերի կազմակերպության համընդհանուր Հռչակագիրը պարունակում է աշխարհում համընդհանուր համաձայնեցված մարդու իրավունքներ, ինչպիսիք են. կրթության իրավունքը, աշխատանքի իրավունքը, հանգստի և զվարճանալու իրավունքը, ժողովրդական հավաքի իրավունքը, արտահայտվելու և կարծիքի ազատությունը, անթուլատրելի է ինքնակամ ձերբակալությունը, բանտարկությունը կամ երկրից վտարումը և այլն: ՄԱԿ-ի մարդու իրավունքների լրիվ ցուցակը կարելի տեսնել այս լինկին. http://www.un.org/en/documents/udhr/

Մարդու իրավունքները առաջացել և զարգացել են տարբեր տարածաշրջաններից, բազմազան մշակույթներից և փիլիսոփայական հայացքներից, ինչպես նաև բազմաբղետ ազգային և կրոնական միջավայրերից: Նրանք ներկայացնում են պետությունից, այլ քաղաքացիներից և օրենքներից մարդու պաշտպանության համար շնորհված միջոցներ:

Ի՞նչ պարտավորություններ են դրված պետության վրա:

Պետությունը պարտավոր է պաշտպանել մեր իրավունքները. պաշտպանել մեր

կյանքը, արժանապատվությունը և անձնական անձեռնմխելիությունը, ապահովել տեղաշարժի ազատություն, օժանդակել ազատ և հավասար պայմաններում կրթություն ստանալուն և ստեղծել այնպիսի միջավայր, որտեղ այս իրավունքների իրականացումը հնարավոր լինի առանց խտրականության:

Ոչ մի երկիր չի համարվի ազատ և ժողովրդավարական այնքան ժամանակ, մինչև երկրի իրավասության մեջ գտնվող մարդիկ (քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք և օտարերկրացիները) շնորհված չեն լինի բոլոր իրավունքներով և ազատություններով: Մարդու իրավունքները հիմնված են հետևյալ արժեքների վրա. **ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ, ՆԵՐՈՂԱՄՏՈՒԹՅՈՒՆ, ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ, ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆ, ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ և ԱՐԴԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ:**

Հավասարությունն արժեքը արտահայտված է օրենքի առջև հավասարության մեջ, ինչպես նաև տարբեր մշակույթի և կրոնական իրավունքների հավասարությունում: Հավասարությունը ամեն մարդու ընձեռում է հնարավորություն՝ լինել հավասար պայմաններում այլ մարդկանց հետ, սակայն այս միջոցի կիրառումը կախված է անձամբ մարդուց: Հավասարության սկզբունքով պետության կողմից բոլոր մարդկանց նկատմամբ պահպանված է հավասար վերաբերմունք: Անթույլատրելի է մեկ անձնավորությանը անհիմն առավելություններ շնորհել այն ժամանակ, երբ խախտվում է ուրիշի իրավունքը:

Ներողամտությունը, այսինքն՝ **հանդուրժողականությունը** ենթադրում է բազմաբղետությամբ հարուստ մեր աշխարհի մշակույթների, մեր արտահայտվելու ձևերի նկատմամբ հարգանք, դրանց ընդունում և գնահատում: Դա նշանակում է լինել մարդասեր, ինչը խթանվում է գիտելիքով, բաց լինելով, հաղորդակցականությամբ, ազատ մտածելակերպով, խղճով և հավատքով: Հանդուրժողականությունը դա տարբերվողի նկատմամբ ներդաշնակությունն է: Դա միայն բարոյական պարտականություն չէ, դա նաև քաղաքական և օրենքի պահանջ է: Հանդուրժողականությունը պատիվ է, ինչը հնարավոր է դարձնում խաղաղությունը, նպաստում է պատերազմի կուլտուրան խաղաղության կուլտուրա յին փոխարինմանը:[3] Ներողամտությունը արմատավորում է հարգանք ուրիշների կարծիքների, արտահայտվելու տարբեր ձևերի և մարդկային անհատականության զարգացման նկատմամբ:

Ներողամտությունը պարունակում է տարբեր իրավունքների նկատմամբ հարգանք: Այն ենթադրում է այն, որ բոլոր մարդիկ ունեն սեփական կարծիք և ունեն իրավունք քննադատելու ուրիշի կարծիքը, քննադատելու իշխանությանը, որոշակի անձանց կամ կարծիքներ և այլն, ինչպես նաև հանդուրժողականությունը ենթադրում է ուրիշների կարծիքը ունկնդրելու ունակություն անգամ այն դեպքում, երբ դրանք ունկնդրի համար անընդունելի են: Ներողամտության արտահայտությունը այլոց կրոնների և ազգայինի նկատմամբ ներկայացնում է մարդու իրավունքների պաշտպանության հիմքը:

[3] http://www.un.org/en/events/toleranceday/pdf/tolerance.pdf

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ, ինչպես քաղաքական կառավարում նշանակում է ժողովրդի կառավարում, երբ ոչ միայն մեծամասնության իրավունքները, այլև փոքրամասնության իրավունքներն արդյունավետորեն պաշտպանված են: Սա չի ենթադրում փոքրամասնության անսահմանափակ իշխանություն, այլ ենթադրում է՝ մեծամասնության սահմանափակ իշխանություն որոշակի արժեքներով և մարդու իրավունքներով, և եթե որևէ արժեքներ հաստատված են օրենքով և հավասարապես վերաբերում են և՝ մեծամասնությանը, և՝ փոքրամասնությանը:

ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ դա սեփական անձի նկատմամբ հարգանքը պահպանելու ունակություն է, ինչը ներկայացնում է բոլոր մարդկանց իրավունքների և ազատությունների աղբյուրը: Արժանապատվության զգացում ունեն ինչպես յուրաքանչյուր անձ, այնպես էլ բոլոր մարդիկ, չնայած այն բանին նա նորածին է, թե հանցագործ:

ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ դա քո ցանկությամբ գործելն է մինչև այն սահմանը, քանի դեռ չի խախտվում ուրիշի ազատությունը:

ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆԸ խորհրդանշում է արժեքներ, որոնք հիմնված են նպատակահարմարության, օրենքի, էթիկայի և այլ միջոցների վրա:

Ինչպե՞ս պետք է պետության կողմից լինեն պաշտպանված ազգային և էթնիկ փոքրամասնությունների իրավունքները:

Երկիրը քաղաքական միավորում է, որի հասարակությունը անցավ ինքնորոշման գործընթաց և ունի ընդհանուր պատմություն, լեզու, մշակույթ, ավանդույթներ, տարածք, վարչական պետական ինստիտուտներ և կառավարվում է մեկ պետության իրավասությամբ:

Վրաստանը նաև բազմազգ երկիր է և ձգտում է դեպի հանդուրժողականություն և բոլոր քաղաքացիների նկատմամբ հավասար վերաբերմունքի: «**ԱԶԳԱՅԻՆ ԽՈՒՄԲԸ** դա բնակչություն է, որի անդամները միմյանց նկատմամբ նույնական են իրատեսորեն կամ ենթադրաբար գոյություն ունեցող ընդհանուր գենետիկայով կամ նախնիներով»[4]: Ազգային խմբի նույնությունը ընդհանուր առմամբ որոշվում է որպես հանրային և սոցիալական հասարակություն, որը նաև ունի ընդհանուր լեզու, սովորություններ, ավանդույթներ, առասպելներ, մշակույթ, դավանանք և ֆիզիկական բնութագրիչներ: Ընդհանուր առմամբ ազգային փոքրամասնությունը հանդիսանում է պետությունում բնակվող քաղաքացիների խումբ, որի թվաքանակը ետ է մնում բնակչության մեծամասնությունից, նրանք մեծամասնությունից տարբերվող լեզվով են խոսում, հետևում են այլ դավանանքի և ունեն այլ ազգային ծագում: Ժամանակակից միջազգային օրենսդիր գործիքները արգելում են ցանկացած տեսակի խտրականությունը «ազգային կամ էթնիկ

[4] http://www.diffen.com/difference/Ethnicity_vs_Race

խմբերի նկատմամբ»: Վրաստանի Սահմանադրության համաձայն «Վրաստանի քաղաքացիները հավասար են սոցիալական, տնտեսական, մշակութային և քաղաքական կյանքում, անկախ նրանց ազգային, էթնիկական, կրոնական կամ լեզվական պատկանելության: Միջազգային իրավունքի համընդհանուր ճանաչված սկզբունքներին և նորմերին համապատասխան նրանք իրավունք ունեն ազատ, առանց որևէ խտրականության և միջամտության զարգացնել իրենց մշակույթը, օգտվել մայրենի լեզվից անձնական կյանքում և հասարակության մեջ»: (Վրաստանի Սահմանադրություն, 38.1 Հոդված):

1992 թվականին ՄԱԿ-ը ընդունեց «Ազգային, էթնիկ, կրոնական և լեզվական փոքրամասնություններին պատկանող մարդկանց իրավունքների» հռչակագիր, որի համաձայն, ազգային փոքրամասնությունները պետք է իրավունք ունենան ազատ արտահայելու իրենց մշակույթը, կրոնը և լեզուն ինչպես հասարակության մեջ, այնպես էլ անձնական կյանքում: Նրանք իրավունք ունեն ակտիվորեն մասնակցելու պետության մշակութային, կրոնական, սոցիալական, տնտեսական և հասարակական կյանքին, ինչպես նաև մասնակցություն ունենալ այն հարցերի նկատմամբ որոշումների ընդունման գործընթացին կենտրոնական կամ տեղական մակարդակով, որոնք վերաբերում են նրանց որպես ազգային փոքրամասնություններ, «պետությունը պետք է ձեռնարկի միջոցներ ստեղծելու մատչելի միջավայր այն բանի համար, որ փոքրամասնությունների ներկայացուցիչները արտահայտեն սեփական տարբերությունը, զարգացնեն սեփական մշակույթը, լեզուն, կրոնը, ավանդույթները և սովորությունները այն մասնավոր դեպքերի վերացմանը զուգընթաց, որոնք խախտում են պետական օրենքը և հակադրվում են միջազգային չափանիշերին»: (Հոդված 4.2) փոքրամասնություններն էլ իրենց հերթին պետք է հարգեն օրենքը և այն փաստը, որ «արգելված են բոլոր գործողությունները, որոնք հակասում են ՄԱԿ-ի նպատակներին և սկզբունքներին, այդ թվում ինքնիշխան հավասարությանը, տարածքային ամբողջականությանը և երկրի քաղաքական անկախությանը» (Հոդված 8.4)

Նույն վերաբերմունքներին կհանդիպեք Վրաստանի Սահմանադրության մեջ.

«Միջազգային իրավունքի համընդհանուր ճանաչված սկզբունքներին և նորմերին համապատասխան փոքրամասնությունների իրավունքների իրականացումը չպետք է հակադրվի Վրաստանի ինքնիշխանությանը, պետական կառուցվածքին, տարածքային ամբողջականությանը և քաղաքական անկախությանը»: (Վրաստանի Սահմանադրություն, Հոդված 38.2): ■

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՉԻ ԵՆԹԱԴՐՈՒՄ ՄԻԱՅՆ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ: ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՅՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԽՎԱԾ Է ՔԱՂԱՔԱՑՈՒ ԱՄԵՆՕՐՅԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ: ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻՆ ԻՐ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՄԲ ՊԵՏՔ Է ՄԱՍՆԱԿՑԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆՈՐԵՆ ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՀԱՐՑԵՐԻ ԼՈՒԾՄԱՆԸ, ՍԵՓԱԿԱՆ և ԻՐ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆԸ: ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԸ ՆԱ և ՊԵՏՔ Է ԸՆԴԳՐԿՎԱԾ ԼԻՆԵՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ, ԻՆՉԸ ՆԱԽԱՏԵՍՈՒՄ Է ՆՈՐ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՈՆԱՅԱ ԱՆՁԱՆՑ ՀԵՏ:

Մաս III
Քաղաքացիական հասարակություն և քաղաքացիների մասնակցություն



Ի՞նչ է քաղաքացիական հասարակությունը: Ինչո՞ւ պետք է քաղաքացին մասնակցի հասարակական հիմնախնդիրների լուծմանը: Ինչո՞ւ է քաղաքացիների ակտիվությունը անհրաժեշտ ժողովրդավարության համար: Ի՞նչ է հանրային տեղեկատվությունը և ինչպե՞ս այն պահանջենք: Ի՞նչ դեր կարող է խաղալ առանձին անձը հասարակության մեջ ժողովրդավարությունը պահպանելու և զարգացնելու համար:

Ի՞նչ է քաղաքացիական հասարակությունը:

Տարիների ընթացքում այս տերմինը ընդգրկեց հասարակության լայն սպեկտր: Համաշխարհային բանկը քաղաքացիական հասարակություն տերմինը հետևյալ կերպ է մեկնաբանում. քաղաքացիական հասարակությունը ոչ կառավարական և ոչշահութաբեր կազմակերպությունների լայն սպեկտր է, որոնք գոյություն ունեն հասարակական կյանքում և արտահայտում են դրանց անդամների և այլոց շահերը և արժեքները, ազգային, մշակութային, քաղաքական, գիտական, կրոնական կամ բարեգործական տեսանկյունների հաշվառումով: Քաղաքացիական հասարակական կազմակերպություններն (CSOs) են. հասարակական խմբերը, ոչկառավարական կազմակերպությունները (NGOs), արհեստակցական միությունները, բնիկ բնակչության խմբերը, բարեգործական կազմակերպությունները, կրոնական կազմակերպությունները, մասնագիտական ասոցիացիաները և հիմնադրամները:[5]

Քաղաքացիական հասարակության գոյությունը առողջ ժողովրդավարական հասարակությունների էական բնութագրիչն է: Երբ առանձին անձնավորություններ ընդհանուր հետաքրքրություններով և հիմքերով միասնաբար սկսում են աշխատանքը, կիսում են միջոցները, ավելի շատ կարող են հասնել նպատակին, քան դա կարող են առանձին անձինք միայնակ: Քաղաքացիական հասարակությունը տարբեր դեր է կատարում: Դրա որոշ խմբեր լոբբինգում են օրենսդիրներին օրենքում փոփոխություններ մտցնելու նպատակով այն դեպքում, երբ այլ խմբեր լոբբինգում են գոյություն ունեցող օրենքների պաշտպանությունը

[5] http://web.worldbank.org/WBSITE/EXTERNAL/TOPICS/CSO/0,,contentMDK:20101499~menuPK:244752~pagePK:220503~piPK:220476~theSitePK:228717,00.html

և դրանց գործադրումը: Որոշ խմբեր հնարավոր է տեսնում են իրենց դերը տարբեր հարցերի մասին հասարակության իրազեկման և կրթության մեջ: Ոմանք էլ կարող են կողմնորոշված լինել դեպի որոշակի հարցերի բարելավմանը ուղղված գործողությունները: Որոշ խոշոր քաղաքացիական կազմակերպություն հնարավոր է վերևում թվարկած երկու կամ ավելին իրականացնի որոշակի հարց(եր) ի բարելավման համար: Ժողովրդավարական հասարակության անդամներն իրավունք ունեն կազմակերպված կերպով համագործակցելու, որպեսզի որոշեն նպատակները, սահմանեն կարիքները, ազդեցություն ունենան հանրային քաղաքականության վրա և պահանջեն իշխանության հաշվետվություն:Դրան կարելի է հասնել քաղաքացիական հասարակությամբ: Քաղաքացիական հասարակությունը հզոր լծակ է իշխանությունից հաշվետվություն պահանջելու և փոփոխությունների փաստաբանության համար:

Ժողովրդավարությունը պետք է ստեղծի քաղաքացիական հասարակության գոյության և գործունեության համար մատչելի հանգամանքներ: Ժողովրդավարական հասարակություններում քաղաքացիական հասարակությունը պաշտպանված է օրենքով: Պետությունը/իշխանությունը չպետք է ստեղծի կամ և միջամտի քաղաքացիական հասարակական կազմակերպությունների գործունեություններին, սակայն կարող է կատարել կարևոր դեր այն բանի համար, որպեսզի ստեղծի օրենսդրական շրջանակ քաղաքացիական հասարակական կազմակերպությունների ազատ և անկախ գործունեության համար: Այլ խոսքերով ասած՝ իշխանությունը չպետք է վերահսկի քաղաքացիական հասարակությանը, սակայն նա ունի իշխանություն կարգավորելու նրանց գործողությունները օրենքների միջոցով:

Քաղաքացիական հասարակության կարևոր առաքելություններից մեկը իշխանության գործունեության մշտադիտարկումը (մոնիտորիգը) և մանրամասն ուսումնասիրությունն է: Փաստ է, որ իշխանություններն ունեն միտում ավելացնելու իրենց իրավասությունը: Դա հիմնականում տեղի է ունենում այն ժամանակ, երբ իշխանությունը կիրառում է իր իրավունքները կամ իշխանությունը, սակայն չի ստուգվում և չի կատարում իր պարտականությունները քաղաքացիների նկատմամբ:

Քաղաքացիական հասարակությունը չպետք է միջամտի իշխանության գործունեությանը: Նա նաև չպետք է կատարի իշխանության գործառույթներ, նա չունի իրավունք արձակել կամ և գործնականում իրականացնել օրենքներ, ինչպես նաև իրականացնել գործադիր իշխանություն: Այս ամենը վերևում ասված իշխանության գերակայությունն է: Չնայած սրան, քաղաքացիական հասարակությունն ունի իրավունք բացահայտել իշխանության կողմից իրավասության չարաշահման տարբեր դեպքեր, օրինակ, բացահայտել օրենքի խախտման, անձնական ազատության և արժանապատվության անպատվության դեպքերը: Դրա հետ միասին, ինչպես դա ՎԵԻԱ-ի մասին զրույցում արդեն նշեցինք, քաղաքացիական հասարակությունը պետք է բավարարի հասարակության պահանջը այն դեպքում, երբ դա չի կատարում կառավարությունը կամ մասնավոր սեկտորը:

Ճիշտ է, քաղաքացիական հասարակությունը չի կարող փոփոխել իշխանությունը կամ իր վրա վերցնել իշխանության գործառույթները, բայց նա իսկապես իրավունք ունի վերահսկելու իշխանության գործունեությունը և ազդեցություն գործելու դրանց վրա: Բարձրաձայնել և քննադատել, երաշխավորություններ առաջադրել և կոնստրուկտիվ համագործակցություն առաջարկել, բողոքի հայտարարություններ, խաղաղ բողոքի ցույցեր կազմակերպել և մասնակցել դրանց՝ սրանք այն մի քանի միջոցներն են, որոնցով քաղաքացիական հասարակությունն ունի ունակություն հրահրելու իշխանությանը՝ պաշտպանելու սոցիալական արդարությունը և մարդկանց իրավունքները: Այս միջոցները թեև երկրում չեն ապահովում հիանալի մթնոլորտ, սակայն դրանք կարող են կրճատել պետության ունակությունը մեծացնելու իր իշխանությունը և ավելացնել կառավարության հաշվետու լինելու պատասխանատվության զգացումը:

Ինչո՞ւ պետք է քաղաքացին մասնակցի հասարակական հիմնախնդիրներիլուծմանը:

«Իմեդի»-ի գործը Վրաստանի ոչհեռավոր պատմության մեջ քաղաքացիական հասարակության օրինակներից մեկն է: 2000 թվականին Վրաստանի քաղաքացիները հետաքննեցին առողջության իրավիճակի հարցերը երեխաների շրջանում և որոշեցին հիմնադրել ոչկառավարական կազմակերպություն «Իմեդի» (Հույս): 2001 թվականին «Իմեդին» ստացավ ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի (UNICEF) ֆինանսավորումը «Երեխաների առողջական իրավիճակի մոնիտորինգ Վրաստանի լեռնային տարածաշրջաններում» խորագրով նախագծի համար: Նախագծի ընթացքում «Իմեդիին» ակնհայտ դարձավ, որ որոշակի տարածաշրջաններում երեխաների մեծամասնությունը ուներ վահանաձև գեղձի սուր հիմնախնդիրներ, ինչը առաջացել էր յոդի պակասության պատճառով: Պարզվեց նաև, որ այդ կապակցությամբ գոյություն չունեն պետական ծրագրեր: «Իմեդիի» անդամները զեկույց ներկայացրեցին առողջապահության նախարարությանը և երեխաների իրավունքների ուղղությամբ գործող ոչկառավարական և միջազգային կազմակերպություններին: Դրա հետ միասին լոբբինգում էին, որպեսզի իշխանությունը ձեռնարկեր միջոցներ և մատակարարեր յոդացված աղ բարձրալեռ տարածաշրջանների բնակչությանը:

2002 թվականին «Իմեդին» համագործակցություն առաջարկեց «Կինը և առողջությունը» կազմակերպությանը բարձրալեռ տարածաշրջաններում կանանց պտղաբերության առողջության իրավիճակով հետազոտություն անցկացնելու համար: Հետազոտությունը ցույց տվեց, որ յոդի պակասությունը լեռնային տարածաշրջաններում ուներ բացասական ազդեցություն ոչ միայն երեխաների, այլև կանանց առողջության վրա, ինչը կապված էր արգանդի քաղցկեղի առաջացման հետ:

«Իմեդի»-ի առաջարկությունների արդյունքում առաջ եկան հատուկ պետական ծրագրեր, որոնք ապահովեցին լեռնային տարածաշրջանների մեծամասնությանը

յոդացված աղերի մատակարարումը: Այն տարածաշրջաններում, որտեղ պետության ջանքերը բավարար չէին, ոչ կառավարականների և միջազգային կազմնակերպությունների միջոցով հաջողվեց մարդասիրական առաքելություններ իրականացնել: Սա քաղաքացիական հասարակության իշխանության հետ համագործակցությամբ հասարակական հիմնախնդիրը լուծելու վառ օրինակ է:

Ինչո՞ւ է քաղաքացիների ակտիվությունը անհրաժեշտ ժողովրդավարության համար:

Վրաստանի ժողովրդավարական զարգացման մարտահրավերներից մեկը իշխանությունում և նրանից դուրս քաղաքացիների մասնակցությունն է: Քաղաքացիների մասնակցության իրականացումը կարևորագույնն է լավ կառավարման սկզբունքի ապահովման համար: Լավ կառավարումը մի կողմից ենթադրում է հասարակությունը և քաղաքացին, որոնք ունեն հոգևոր և հասարակական կյանքում մասնակցության անհրաժեշտ ունակություն-հմտություններ, իսկ մյուս կողմից՝ հանրային գործիչներ, որոնք պետք է համագործակցեն քաղաքացիների հետ:

Ժողովրդավարությունը չի ենթադրում միայն քաղաքացիների մասնակցություն ընտրություններին: Ժողովրդավարության գոյությունը կախված է քաղաքացու ամենօրյա գործունեությունից: Ժողովրդավարական հասարակությունում քաղաքացին իր նախաձեռնությամբ պետք է մասնակցի հասարակականորեն նշանակալից հարցերի լուծմանը, սեփական և իր հայրենակիցների իրավունքների պաշտպանությանը: Քաղաքացիները նաև պետք է ընդգրկված լինեն պետության որոշումների ընդունման գործընթացին, ինչը նախատեսում է նոր համագործակցություն հանրային պաշտոնյա անձանց հետ:

Ժողովրդավարական հասարակության համար կենսական է այն, որ քաղաքացին ունենա պատասխանատվություն հասարակության և իր հայրենակից քաղաքացիների նկատմամբ: Քաղաքացին չպետք է լինի կենտրոնացած միայն իր հետաքրքրությունների վրա, այլ նա իր ներդրումը պետք է ունենա հասարակության ընդհանուր բարօրության գործում: Իսկ այս վերջինը ենթադրում է քաղաքացիների կամավորական ընդգրկվածություն հասարակական կյանքի համարյա բոլոր ոլորտներում, որոնք կողմնորոշված չեն ֆինանսական շահույթի վրա և նպատակադրված են որոշակի սոցիալական հիմնախնդիրների լուծման քաղաքացու կողմից կիրառված հնարավորությունների և ունակություն-հմտություններ միջոցով:

Բացի ընտրություններին մասնակցությունից գոյություն ունեն հասարակությունում քաղաքացիների ընդգրկվածության տարբեր ուղիներ: Ստորև ներկայացված է հասարակական կյանքում քաղաքացիների ընդգրկվածության տեսակների մի քանի օրինակներ.

Մասնակցություն խմբում: Մարդիկ ազատ են միավորվելու համապատասխան խմբերում ըստ իրենց հարցերի և հետաքրքրությունների: Օրինակ, մարդիկ միավորվում են. եկեղեցական խմբում կամ կրոնական կազմակերպությունում, դպրոցի խմբում, մարզական կամ զվարճալի ասոցիացիայում, քաղաքացիական ասոցիացիաներում և հասարակական ակումբներում: Որոշ դեպքերում խմբերում մասնակցությունը կարող է լինել նույն նշանակության, ինչպիսին համագործակցությունն է քաղաքացիական հասարակության հետ: Դրա հետ միասին, հնարավոր է, որ քաղաքացիական ընդգրկվածության ժամանակ շեշտը դրվի այնպիսի ակտիվությունների վրա, որոնք հակադրվում են ոչ կառավարական և քաղաքացիական կազմակերպությունների կողմից նշված հարցերի կարգավորման ջանքերին: Դրա հետ միասին կարող է տարբերություն հանդիսանալ այն, որ որոշ այդպիսի խմբեր որոշակի դեպքերում միայն այն բանի համար գոյություն ունենան, որպեսզի ծառայեն որոշակի հասարակությանը կամ հետաքրքրություններին:

Աշխարհում նման կազմակերպությունների և ակումբերի շատ օրինակներ գոյություն ունեն, որտեղ առանձին անձնավորություններ, կիսելով ընդհանուր հետաքրքրությունները, միավորվում են հասարակական ծառայության համար: Այդպիսի մեկ օրինակ է տեղական այգու ակումբում միավորվելը, որի անդամները հաճախ հանդիպում են միմյանց այգեգործության մասին տեղեկատվության հաղորդման և այնպիսի նախագծերում մասնակցության նպատակով, ինչպիսիք են տնկիների տնկարկում և հասարակության համար տեղական զբոսայգում այգու պահպանումը: Այս տեսակի ասոցիացիան կարող է լինել ոչ ձևական, ղեկավարության նվազ ձևավորված հիերարխիայով կամ անդամության պահանջներով: Այլ կազմակերպություններ հնարավոր է ավելի ձևական կառուցվածք և կայուն ձևավորված կանոններ ունենան, թե ով կարող է դրանում միավորվել: Օրինակ, գոյություն ունեն որոշ քաղաքացիական կազմակերպություններ, որոնք որպես անդամ միավորում են միայն հրավիրված անձանց, ինչը նախատեսում է անդամության վճարի և այլ պարտականությունների կատարում: Այս կազմակերպությունները անդամների համար համատեղում են շատ սոցիալական գործառույթներ: Նրանք նաև ընկերությանը ծառայության նպատակով իրականացնում են հիմնադրամների որոնում և կարևոր հարցերի համար հիմնադրամների դոնացիա կամ կրթության և գիտակցության բարձրացման ծրագրեր:

Գոյություն ունեցող խմբի ընտրություն մասնակցության համար կամ նոր խմբի ձևավորում նշանակում է ծառայություն սեփական և ընկերության/համայնքի շահերին: Նման խմբերը հնարավոր է նշանակալի ներդրում ունենան ընկերության մեջ:

Տեղեկատվության և ժողովրդական երևույթների կազմակերպություն: Ժողովրդավարական հասարակությունում անձնավորություններն ունեն պատասխանատվություն լինելու տեղեկացված մոտակա իրադարձությունների մասին: Երբ անձնավորությունները տեղեկացված են , նրանք ավելի լավ են մասնակցում հանրային որոշումներ ընդունելու գործընթացին և իրականացնում են իշխանության, բիզնեսի, կազմակերպության կամ առանձին

անձնավորությունների գործունեությունների մոնիտորինգ այն նպատակով, որպեսզի ուշադրություն դարձնեն այն արարքներին, որոնք հնարավոր է վտանգ ստեղծեն հասարակության բարօրությանը:

Տեղեկատվություն ստանալ հնարավոր է տարբեր ուղիներով, ինչպիսիք են. հեռուստատեսային նորությունների դիտում, լրագրերի ընթերցում, հանրային բանավեճերին մասնակցություն, ռադիոյի ունկնդրում, ամսագրերի ընթերցում, լրատվությունների տեղադրում օնլայն աղբյուրներում, մասնակցություն այլոց հետ դասախոսությունների և հարցերի քննարկմանը (դա կարող է կատարվել նաև տեխնոլոգիաների միջոցով, ինչպիսիք են օնլայն բլոգ չատերը, facebook-ի երկխոսությունները կամ Twitter): Մոտակա երևույթների մասին տեղեկացված քաղաքացիորեն մտածող մարդիկ կանոնավոր կերպով օգտագործում են այս ամենը, որպեսզի էլ ավելի շատ տեղեկատվություն ստանան, ինչը համարում են որպես սեփական պատասխանատվություն:

Քաղաքական գործունեություն: Ընտրություններին մասնակցությունը ընկալվում է որպես քաղաքացիական ընդգրկվածության ակնառու օրինակ, թերևս ձայն տալը դրա միայն մեկ մեթոդն է: Գոյություն ունի շատ տարբեր տեսակի կարևոր քաղաքական գործունեություն, որը կատարում են առանձին անձինք, ինչպիսին է կուսակցությանը կամ թեկնածուին աջակցության արտահայտությունը, որը բարձրաձայնելու համար մարդիկ հատուկ կրծքանշաններ են կրում կամ սեփական մեքենաների վրա տեղադրում են ստիկերներ (կպչուն պիտակներ), որոնց վրա գրված են իրենց կողմից աջակցություն ցուցաբերվող թեկնածու(ներ)ի անուն(ներ)ը կամ թեկնածու(ներ)ի ընթացակարգ(եր)ի կարգախոսը, թեկնածուի կամ քաղաքական կուսակցության համար հիմնադրամների գրավման գործողություններին մասնակցություն կամ և նման գործողությունների կազմակերպմանը մասնակցություն, քարոզարշավի համար դրամի զոհաբերում, թեկնածուին ձայն տալու համար հեռախոսային զանգերի իրականացում կամ նույն նպատակով կամավոր մասնակցություն թեկնածուի քարոզարշավին: Քաղաքացիները կարող են նշանակալի դեր խաղալ հանրային քաղաքականություն վարելու մեջ, ինչպիսին է օրենքներում փոփոխություն կատարելու նպատակով խնդրագրի (պետիցայի) համար ստորագրություններ հավաքել խորհրդարան կամ տեղական իշխանություն ներկայացնելու համար, տեղական կամ կենտրոնական իշխանության պաշտոնյա անձանց հետ կոնտակտով կամ հանրային հանդիպումներին մասնակցել, որպեսզի արտահայտեն տեսակետներ որոշակի հարցի կապակցությամբ կամ լուսավորեն հասարակությանը կարևոր հարցերի մասին ուրիշներին մոտիվացնելու նպատակով: Հանրային անձանց հետ տեսակետների հաղորդակցության համար այլ մեթոդներ են հանդիսանում խաղաղ բողոքի հավաքների և ցույցերի կազմակերպումը և մասնակցությունը: Ընտրված հանրային պաշտոնյա անձինք առանձնահատուկ ուշադրությամբ պետք է ունկնդրեն հասարակությանը, որին ծառայում են: Այս պատճառով քաղաքացիները վճռական դեր կարող են խաղալ քաղաքականություն ստեղծելու գործում, եթե դրանք առանձին հարցերի հետ կապված իրենց տեսակետները կարտահայտեն բարձրաձայն: Վրացական վարդերի հեղափոխությունը

այն բանի լավ օրինակ է,թե ինչ իշխանություն կարող է ունենալ ժողովուրդը, երբ դրա մեծ մասը կորոշի միասնաբար գործել որևէ բանի աջակցության համար:

Տնտեսական ակցիաներ: Երբեմն քաղաքացիները կարող են արտահայտել իրենց իշխանությունը տնտեսական ակցիաներով: Դա կարելի է կատարել որևէ արտադրանքի կամ սպասարկման վարձակալմամբ կամ հակառակն՝ վարձակալումը մերժելով, որպեսզի արտահայտեն դիմադրություն կամ աջակցություն արտադրողների արժեքների կամ դրանց գործունեությունների նկատմամբ: Օրինակ, եղել են դեպքեր, երբ մարդկանց լայն խմբեր դադարեցրել են որոշակի հագուստի բրենդի գնումը այն բանից հետո, երբ տեղեկացել են, որ նյութերը արտադրվում էին այնպիսի պայմաններում, որոնք էլ խախտում էին այլ մարդու իրավունքները: Երբ ընկերություններին սպառնում է շահույթի լայնամասշտաբ կորուստ, երբեմն նրանք ընտրում են փոփոխել ռազմավարությունը, որպեսզի կրկին վերադարձնեն սպառողներին:

Սպասարկում կամ կամավորական գործունեություն: Կամավորները հնարավոր է ապահովեն հասարակության համար տարբեր տեսակի սպասարկում: Կամավորականությունը հնարավոր է իրականացնել պարբերական հաճախականությամբ, օրինակ, շաբաթական մեկ անգամ, կամ իրականացնել կամավորականության միանվագ ակտերով: Կամավորականությանը բնութագրական հատկանիշ է այն, որ անձնավորությունը ծախսում է իր ժամանակը ուրիշների համար առանց որևէ տեսակի դրամական շահի: Սոցիալական հարցերի կամավորական իրականացման կարողությունը համարյա անսահմանափակ է: Մի քանի օրինակ է անօթևաններին կամ ծերերին ճաշով սպասարկումը, որբերի ապաստարաններում գտնվող երեխաների համար գրքի ընթերցումը կամ ուսուցումը, քաղաքային զբոսայգու բարեկարգումը կամ ընտրությունների դիտորդությունը: Ժամանակ առ ժամանակ առանձին մարդիկ անձամբ կապվում են որբերի ապաստարանի հետ և նրանց առաջարկում են անհրաժեշտ ծառայություն: Այլ դեպքում մարդիկ կարող են իրականացնել կամավորականություն որևէ կազմակերպության միջոցով, որն արդեն ունի նույնականացված կարիքներ կամավորականություն իրականացնելու և կայուն համակարգ և հարաբերություն այս կարիքների ապահովման համար: Չնայած կամավորականության պարբերականությանը, գործունեության տեսակին կամ մեթոդին (մենակ կամ կազմակերպության միջոցով իրականացնելիս), կամավորականությունը միջոց է, որով համարյա յուրաքանչյուր քաղաքացի կարող է զբաղվել հասարակական հարցերով:



Ի՞նչ է հանրային տեղեկատվությունը և ինչպե՞ս այն պահանջենք:

Վրաստանի Սահմանադրության և ընդհանուր վարչական օրենսդրության համաձայն, Վրաստանի ամեն քաղաքացի իրավունք ունի պահանջելու հանրային տեղեկատվություն հանրային հիմնարկություններից, ինչպիսիք են.

նախարարություններ, նախագահի վարչակարգ, ավագանիներ, վարչություններ: Հանրային գերատեսչությունները պատասխանը պետք է ներկայացնեն հնարավորինս կարճ ժամկետներում, իսկ վերջնական ժամկետ սահմանվում է նամակի հաշվառման ամսաթվից 10 աշխատանքային օրից ոչ ավելի:

Հանրային տեղեկատվությունը հանրային հիմնարկությունում պահպանված տեղեկատվությունն է, որի տալը պետք է կատարվի պահանջի դեպքում: Հանրային տեղեկատվություն է համարվում, օրինակ, պետական բյուջեից շինարարության կամ այլ հանրային միջոցառման (համերգի) ֆինանսավորման համար հատկացված գումարի չափը: Ցանկացած քաղաքացի ունի հանրային տեղեկատվություն պահանջելու իրավունք, բացի այն դեպքից, երբ տեղեկատվությունը համարվում է կոմերցիոն գաղտնիք, անձնական լրատվություն կամ պետական գաղտնիք:

Հանրային տեղեկատվություն պահանջելու նպատակով պետք է պատրաստել նամակ համապատասխան հիմնարկության անունով (որտեղ պահպանված է ձեզ հետաքրքրող տեղեկատվությունը): Հիմնարկության անունը տեղադրեք նամակի եզրին, այնուհետև նշեք ձեր անունը և կապի տեղեկատվությունը և ձևակերպեք ձեր հարցը: Իսկ նամակի վերջում ստորագրեք և գրեք ամսաթիվը: Հանրային տեղեկատվության մասին դիմում ներկայացնելը ձրի է: Պահանջվող տեղեկատվություն տալը մերժելու դեպքում, հանրային հիմնարկությունը պարտավոր է, քաղաքացուն իրազեկել մերժման մասին դիմումը գրանցելուց երեք աշխատանքային օրվա ընթացքում: Հանրային հիմնարկության պատասխանը պետք է պարունակի տեղեկատվություն՝ մերժումը բողոքարկելու կարգի մասին:[6]

Ի՞նչ դեր կարող են խաղալ առանձին անձինք հասարակության մեջ ժողովրդավարությունը պահպանելու և զարգացնելու գործում:

Ժամանակակից ժողովրդավարությունը անհնար է պատկերացնել առանց ակտիվ քաղաքացիների: Ակտիվությունը դրսևորվում է երկու ուղղությամբ. առաջին, երբ քաղաքացիները իրենց ցանկությամբ/կամավոր կերպով մասնակցում են հասարակական նշանակալից հարցերի լուծմանը և երկրորդ, երբ քաղաքացիների ակտիվությունը արտահայտված է հանրային կառավարման գործընթացներին մասնակցությամբ:

Տարբեր տեսակի հասարակական կյանքին ակտիվորեն մասնակցող քաղաքացին մոտիվացված է և գիտակցում է, որ ժողովրդավարական հասարակության զարգացումը կախված է ոչ միայն պետական կարգավորումից և շուկայական տնտեսությունից, այլ կարևոր է նաև այն, որ յուրաքանչյուր քաղաքացի կամ խումբ զգա իր պատասխանատվությունը և կատարի կոնկրետ քայլեր որոշակի ոլորտի բարելավման համար:

[6] For more information: http://transparency.ge/blog/progor-gamovitkhovot-sadjaro-inpormatsia-sakartveloshi-sul-mtsire-3-milioni-lari-daikhardja-saa

Ժամանակակից ժողովրդավարության մեջ քաղաքացիները ակտիվորեն մասնակցում են հանրային անձանց հետ կառավարման խնդիրները լուծելու մեջ: Այս տեսակետից առանձնապես կարևոր են քաղաքացիների և իշխանության միջև համագործակցության կազմակերպված ձևերը: Այս ձևերը նշանակում են, որ հասարակության յուրաքանչյուր անդամի պետք է տրվի հնարավորություն մասնակցելու կարևոր քաղաքական որոշում ընդունելու գործընթացին: Յուրաքանչյուրը և բոլորը պետք է զգան, որ իրականում նա պետության հարգարժան անդամ է և ունի հնարավորություն մտցնելու իր ավանդը պետության բարօրության համար: ■


1
2

Մաս IV
ընտրություններ և ներկայացուցչական ժողովրդավարություն

Ինչպե՞ս է գործում ներկայացուցչական ժողովրդավարությունը: Ո՞րն է ընտրությունների դերը ժողովրդավարության մեջ:

Ինչպե՞ս է գործում ներկայացուցչական ժողովրդավարությունը:

Ներկայացուցչական ժողովրդավարության ժամանակ ժողովուրդը ընտրում է ներկայացուցիչների և նրանց շնորհում է վստահություն, փոխանցելով նրանց ղեկավարելու իրավունք: Այս իրավունքի փոխանցումը ժողովրդից իրենց ներկայացուցիչներին հիմնված է արդյունավետության և գործունակության սկզբունքների վրա: Քաղաքացիները միջոց չունեն ամեն օր մասնակցելու քաղաքական կամ սոցիալական հարցերի քննարկմանը: Ներկայացուցչական մարմինները (ժողովրդի կողմից ընտրված իշխանություն) ճիշտ այն բանի համար են ընտրված, որպեսզի կապ պահպանեն ժողովրդի հետ, ով նրանց իշխանություն է շնորհում և ապահովեն որոշում ընդունելու գործընթացի վարումը արագ և արդյունավետ:

Ներկայացուցչական ժողովրդավարության գործունեության համար ամենակարևորը ժողովրդի հետ կապի պահպանումն է: Այս կապը կարող է արտահայտվել սահմանված պարբերականությամբ անցկացված ընտրությունների տեսքով, ինչպես նաև հանրաքվեով, որը ուղղակի ժողովրդավարության ձև է: Ներկայացուցչի ընտրությունը կառավարման մարմինների կամ կառավարության մեջ հանդիսանում է ընտրողների նկատմամբ հաշվետվության պատասխանատվության օրինակ: Կարևոր է, որ քաղաքացիները հասկանան, թե ինչ ուժ ունի իրենց հատկացված քվեաթերթիկը, կարևոր է նաև այն, որ քաղաքացիները հավասարաչափ լինեն ընդգրկված մինչև ընտրությունները և ընտրություններից հետո, որպեսզի նրանց կողմից ընտրված պաշտոնյաները կատարեն իրենց պատասխանատվությունները և իրենց իսկ քարոզարշավի ժամանակ արված խոստումները: Քաղաքացիները միշտ պետք է հիշեն, որ իրենց

ներկայացուցիչները իրենց ընտրածներն են և նրանց աշխատավարձ վճարում են քաղաքացիները (հարկեր վճարելու միջոցով):

Ժամանակակից ներկայացուցչական ժողովրդավարությունում որոշում ընդունելու ժամանակ մեծամասնությանը շնորհվում է առավելություն, սակայն դա չի նշանակում, որ մեծամասնությունը անսահմանափակ իշխանություն ունի: Ժողովրդավարությունը ոչ միայն մեծամասնության շահերին պետք է ծառայի, այլև պաշտպանի յուրաքանչյուր քաղաքացու ազատությունը և արժանապատվությունը, կրոնական, ազգային, սեռական և քաղաքական փոքրամասնությունների հաշվառումով: Մեծամասնությանը վերահսկում է օրենքը, որի նպատակն է հավասարակշռել մեծամասնության ուժի կիրառումը, որպեսզի չխախտվեն փոքրամասնությունների իրավունքները: Ժամանակակից ժողովրդավարության տարրերն են իշխանության բաշխումը և մարդու իրավունքների պաշտպանությունը: Ներկայացուցչական ժողովրդավարության ավանդական տարրերը, ինչպիսիք են պարբերական ընտրությունները և պետության տարբեր մարմինների կողմից միմյանց վերահսկումը, լրիվությամբ չի պայմանավորում արդյունավետ կապ ժողովրդի հետ: Ճիշտ այս նպատակով շատ կարևոր է պետության և հասարակության միջև հարաբերության պահպանումը: Հասարակությունը, որը ակտիվորեն ընդգրկված է կառավարման գործընթացին, ձեռք է բերում պատասխանատվության զգացում և գիտակցություն, որ ինքը հանդիսանում է պետության և երկրի մասը:

Ի՞նչ դեր ունեն ընտրությունները ժողովրդավարության մեջ:

Ընտրողների համար գոյություն ունի սեփական կարծիքը և ցանկությունները արտահայտելու (ձայն տալու) երկու ուղի: Համապատասխանաբար, գոյություն ունի ժողովրդավարության երկու ձև. **ՈՒՂՂԱԿԻ և ԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ:** Ուղղակի ժողովրդավարության դեպքում իրենք ընտրողները և ոչ թե նրանց կողմից ընտրված ներկայացուցիչները կամ նշանակված պաշտոնյա անձինք, ձայն տալով ընդունում են որոշումներ այն սոցիալական հարցերի կապակցությամբ, որոնք նրանց համար կարևոր են:

Ուղղակի ժողովրդավարության հիմնական նպաստող փաստ է ընտրողների համեմատաբար փոքր քանակությունը և այնպիսի հարց, որը չի պահանջում ընտրողների կողմից մեծ ժամանակի և էներգիայի վատնում: Ուղղակի ժողովրդավարություն կարող է իրականացվել, օրինակ, գյուղի հավաքներում, արհեստակցական միությունների կամ տեղական կազմակերպությունների գլխավոր հանդիպումներում և այլն: Ժամանակակից ժողովրդավարությունը առավելապես ներկայացուցչական է. քաղաքացիները ուղղակի ընտրում են սեփական ներկայացուցիչներին, որոնք իրենց հերթին ընդունում են քաղաքական որոշումներ, ստեղծում են օրենքներ, մշակում են քաղաքականություն և ռազմավարություն և նպաստում են դրանց իրականացմանը:



Սահմանադրությամբ ապահովված է քաղաքական իշխանության իրականացման մեջ քաղաքացիների մասնակցությունը, այդ թվում ուղղակի ժողովրդավարությամբ, ինչը նշանակում է, օրինակ, ոչ թե խորհրդարանի օգնությամբ, այլև անձամբ քաղաքացիների կողմից որոշումների ընդունում կարևոր քաղաքական, պետական և հանրային հարցերի մասին: Ուղղակի ժողովրդավարության տեսակներն են **ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ** և **ՀԱՆՐԱՔՎԵԼ:**

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ընթացակարգ է, որի միջոցով էլ, յուրաքանչյուր մարդ կարող է իրականացնել իր հիմնական իրավունքներից մեկը՝ սեփական երկրի կառավարման մեջ իր մասնակցությունը:

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 21-րդ Հոդվածում կարդում ենք.

- Բոլորը ունեն իրավունք մասնակցելու սեփական երկրի կառավարմանը, ուղղակի կամ ազատ ընտրված ներկայացուցչի միջոցով:
- Բոլորը ունեն իրավունք հավասարապես հասնել հանրային սերվիսին իրենց երկրում:
- Կառավարության իշխանության հիմքը պետք է լինի ժողովրդի կամքը: Այդ կամքը պետք է արտահայտված լինի պարբերական և արդարացի ընտրություններով, որը պետք է լինի համընդհանուր, հավասար և անցկացվի գաղտնի քվեարկությամբ կամ համապատասխան ազատ ընտրական ընթացակարգերով:

Ցանկացած պետությունում ընտրությունները քաղաքացիների կողմից կամքի արտահայտման միջոց են և երկրի ժողովրդավարության չափանիշ: Ընտրությունների արդյունքում ընդունում ենք օրենսդիր, գործադիր և դատական իշխանություններ, նրանց պլանները և ծրագրերը ինչպես տեղական, այնպես էլ ազգային մակարդակով: Իսկ նշվածը երկկողմ համաձայնության գործընթաց է և հիմնված է քաղաքացիների վրա, որոնց պետք է կառավարի իշխանությունը: Ընտրությունները դա ճանապարհ է, որի արդյունքում համաձայնությունները վերածում են իշխանության պատասխանատվությունների և իրավունքների:

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ համաձայնության մեխանիզմ է, որի արդյունքը համաձայնությունն է (կոնտրակտ) հասարակության անդամների իշխանության հետ կառավարման հետ կապված հարցերի մասին, որոնք վերաբերում են քաղաքականությանը և դրանց իրականացմանը:

Երբ խոսում ենք ժամանակակից պետությունում ընտրությունների մասին, ի նկատի ունենք երկրի գերագույն կառավարման մարմնի (խորհրդարանի), գործադիր իշխանության գերագույն պաշտոնյա անձի (ավանդաբար նախագահ), ինչպես նաև խորհրդարանի կողմից բարձրագույն պաշտոնյա անձանց ընտրությունը գործադիր և դատական իշխանություններում և տեղական իշխանության մարմինների ուղղակի ընտրությունները: Քաղաքացիական հասարակությունն ունի կարևորագույն դեր ընտրությունների գործընթացում: Ակտիվ ընտրական համակարգ ունենալը

անպայմանորեն չի պայմանավորում ժողովրդավարական ընտրություններ: Ընտրական համակարգ և օրենսդրություն իրականացնելիս թափանցիկությունը շահագրգիռ անձանց և կազմակերպությունների համար կարևորագույն է: Ակտիվ քաղաքացիական հասարակությունը պետք է հետևի ընտրական գործընթացների զարգացմանը, որպեսզի ապահովի թափանցիկությունը, հաշվետվության պատասխանատվությունը, գործընթացի և արդյունքի վստահելիությունը:Դա ենթադրում է դիտարկում և քննադատական հարցերի առաջադրում նախընտրական ժամանակաշրջանում (օրինակ՝ մատուցո՞ւմ է, թե ոչ մեդիան ճիշտ լրատվություն: Որքանո՞վ են կուսակցությունները թափանցիկ կատարած ֆինանսական ծախսերի տեսակետից: Տե՞ղ ունի, թե ոչ վարչական ռեսուրսների գերծախս), ընտրական օրենքի մասին բանավեճերում սեփական ներդրում կատարելը, ընտրությունների դիտարկումը և արդյունքների հաստատումը: ■

Կար և որ է, որ քաղաքացիները հասկանան, թե ինչ ուժ ունի իրենց հատկացված քվեաթերթիկը, կար և որ է նա և այն, որ քաղաքացիները հավասարաչափ լիներն ընդգրկված մինչ և ընտրությունները և ընտրություններից հետո, որպեսզի նրանց կողմից ընտրված պաշտոնյաները կատարեն իրենց պատասխանատվությունները և իրենց իսկ քարոզարշավի ժամանակ արված խոստումները:

Մաս V
Գենդերային հավասարության սահմանում և ապահովում

Ինչո՞ւ է կար և որ գենդերային հավասարությունը ժողովրդավարության կառուցման համար: Ինչ տարբերություն գոյություն ունի կենսաբանական սեռի և գենդերի միջև: Ինչ է արվում Վրաստանում գենդերային հավասարության տեսանկյունից: Ինչո՞ւ պետք է մասնակցեն կանայք քաղաքականությունում:

Ինչո՞ւ է կարևոր գենդերային հավասարությունը ժողովրդավարության կառուցման համար:

Գենդերային հավասարության նշանակության յուրացումը այսօրվա դրությամբ ժողովրդավարության կառուցման կարևորագույն նախապայմաններից մեկն է: Նկատվում է, որ իրատեսորեն անհնար է իսկական ժողովրդավարություն ստեղծել առանց գենդերային հավասարության: Ճիշտ այդ պատճառով, համաշխարհային բանկի 2012 թվականի զարգացման զեկույցի մեջ ընդգծված է գենդերի հարցերի նշանակությունը. «Գենդերային հավասարությունը ներկայացնում է զարգացման նպատակներից մեկը: Ավելին, այն ռացիոնալ կերպով պլանավորված տնտեսության հիմքն է: Գենդերային հավասարությունը բարձրացնում է աշխատանքի արգասաբերությունը և նպաստում է գալիք սերունդների զարգացմանը, ապահովելով հավասարակշռությունը տարբեր ինստիտուտների միջև»[7]:

Գենդերային հավասարությունը մարդու իրավունքների հիմնական սկզբունքն է: Այն երկրի և հասարակության զարգացման հիմնական նախապայմաններից մեկն է, որը պարունակում է կնոջ և տղամարդու հավասար ընդգրկվածությունը սոցիալական կյանքի բոլոր ասպեկտներում, բացառում է խտրականությունը,[8] երկու սեռի ներկայացուցիչների համար ապահովում է իրավահավասարություն, սոցիալական պայմանների բարելավում և հավասար հնարավորություններ զբաղվածության տեսակետից կանանց և տղամարդկանց համար: Հասարակությունում, որտեղ հավասարությունը պաշտպանված է, մարդու իրավունքները, պատասխանատվությունները և կարողությունները սահմանված չեն սեռի համաձայն: Գենդերային հավասարությունը չի նշանակում այն, որ կանայք և տղամարդիկ միատեսակ են, այլ նշանակում է այն, որ կինը և տղամարդը պետք է ունենան միատեսակ մասնագիտական, սոցիալական, քաղաքական, տնտեսական, ընտանեկան և այլն հնարավորություններ:

---

[7] World Bank (2012) World Development Report 2012, Gender Equality and Development

[8] Any distinction, exclusion or restriction made on the basis of sex, "Convention on the Elimination of all Forms of Discrimination against Women", (CEDAW), article 1.

Վերջին 30-40 տարվա ընթացքում կնոջ և տղամարդու դերի ըմբռնումը նկատելիորեն փոփոխվեց աշխարհի շատ երկրներում: Չնայած այն բանին, որ սեռը կենսաբանորեն որոշված հասկացություն է, մշակույթը և հասարակությունը մեծ դեր են խաղում սեռի հետ կապված գործողությունների և ըմբռնումների ձևավորման և զարգացման մեջ: Դրա հետ միասին հարկավոր է տարբերել **ԳԵՆԴԵՐ** և **ՍԵՌ** հասկացությունները:

Ի՞նչ տարբերություն է կենսաբանական սեռի և գենդերի միջև:

Կենսաբանական սեռը ներկայացնում է անատոմիական և ֆիզիկական բնութագրիչ, որը բաժանում է մարդկանց որպես տղամարդ և որպես կին: Կենսաբանական և ֆիզիկական տարբերությունները կանանց և տղամարդկանց միջև արտահայտված են նրանց միջև անատոմիական տարբերության մեջ: Այս տարբերությունները նաև արտացոլված են մարդու մարմնի մեջ հորմոնային և կենսաքիմիական մակարդակով: **Սեռը կենսաբանորեն անփոփոխ է:** Վարքի ձևերը, որոնք կապված են կնոջ և տղամարդու տարբեր կենսաբանական գործառույթների հետ, կոչվում են սեռական դերեր:

Կենսաբանական տարբերության հետ միասին, կինը և տղամարդը տարբերվում են նաև սոցիալական դերերով, ինչպես նաև հոգեբանական բնութագրիչներով և վարքի ձևերով: Ժամանակակից սոցիալական գիտություններում **ԳԵՆԴԵՐ** տերմինը կիրառվում է որպես սեռի սոցիալական նշանակություն:

Գենդերը պարունակում է կնոջ և տղամարդու միջև հոգեբանական առանձնահատկություններով կապված վարքի ձևերի հետ, որոնք պայմանավորված են մշակույթով: Գենդերը սոցիալական կառուցվածք է, որը զարգացել է հասարակության կողմից և սահմանում է կնոջ և տղամարդու սոցիալական դերը, նրանց կարգավիճակը սոցիալական կյանքի բոլոր ասպեկտներում: Գենդերային դերերը պարունակում են սոցիալապես և մշակույթով սահմանված վարքի ձևեր, նորմեր և արժեքներ կանանց և տղամարդկանց համար: Գենդերային դերերը փոփոխվում են ժամանակի և տարածության մեջ: Այս կամ այն վարքը կարող է որևէ հասարակությունում տղամարդու համար լինել բնութագրական, իսկ այլ հասարակության մեջ՝ կնոջ համար: Կամ այն, ինչը կնոջ համար բնութագրական վարք էր համարվում մեկ դարաշրջանում, հնարավոր է անընդունելի համարվի այլ դարաշրջանում:

Սոցիալացման գործընթացում մարդը ձեռք է բերում կուլտուրապես սահմանված դերեր և նույնականացնում է սեփական անձը որևէ գենդերային դերի հետ: **ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՈՒՄ** նշանակում է կուլտուրապես սահմանված գենդերային դերի ըմբռնում և կիսում:

Մշակույթը ավանդաբար հասարակության անդամներին շնորհում է հոգեբանական և վարքի բնութագրիչներ, որոնք կապված են որևէ սեռի հետ: Լայնորեն տարածված կարծիքը հոգեբանական և վարքի բնութագրիչների մասին, թե ինչպես պետք է վարվի կինը կամ տղամարդը, հանդիսանում է **ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԿԱՐԾՐԱՏԻՊ:**

Ի՞նչ է կատարվում Վրաստանում գենդերային հավասարության տեսանկյունից:

Անցած տարիների ընթացքում աշխարհում գենդերային հավասարության ակտիվացման համար կիրառվել են տարբեր տեսակի միջոցներ: Քանի որ գենդերային հավասարության հարցերը առավելապես կապված են կանանց իրավունքների հետ, վերը նշված միջոցների խնդիրն է կանանց դերի ամրապնդումը և հավասար միջավայրի ստեղծումը:

15 տարի է, ինչ Վրաստանի կառավարությունը ձևավորեց երկրի գենդերային քաղաքականությունը միջազգային և ոչ կառավարական կազմակերպությունների օգնությամբ: Միջազգային պայմանագրերը և որոշումները կարևոր դեր խաղացին այս քաղաքականության ստեղծման մեջ: 1994 թվականին Վրաստանը միացավ կանանց նկատմամբ ցանկացած տեսակի խտրականությունը արմատախիլ անելու կոնվենցիային (CEDAW), որի նպատակն է հասնել գենդերային հավասարության, նախատեսելով կնոջ պահանջմունքը՝ ունենալ հավասար իրավունքներ սոցիալական կյանքի բոլոր ոլորտներում: Այս փաստաթուղթը դարձավ Վրաստանի ազգային գենդերային քաղաքականության հիմնական հիմքը: Պետության կողմից մշակված ազգային գենդերային քաղաքականությունը պարունակում է ինստիտուցիոն մեխանիզմներ գենդերային հավասարության համար և ազգային փաստաթղթեր: 1998 թվականից ազգային գործնական պլանները մշակում էին այնպիսի գործողություններ, որոնք նպաստում էին կանանց ուժեղացմանը և գենդերային հավասարությանը: 2010 թվականին Վրաստանի խորհրդարանն ընդունեց օրենք գենդերային հավասարության մասին: Այն առաջին փաստաթուղթն էր, որը սահմանում էր գենդերային հավասարության քաղաքականությունը երկրում և հիմնադրում էր գենդերային հավասարության խորհուրդ:

2010 թվականին փոփոխություններ մտան խորհրդարանի կանոնադրությունում, որի հիման վրա էլ հիմնադրվեց գենդերային հավասարության խորհուրդը, որպես մշտական գործող մարմին: Նշված խորհուրդը գործում է խորհրդարանում և դրա նախագահն է խորհրդարանի փոխնախագահը: Գենդերային հավասարության խորհուրդը միավորում է խորհրդարանի 12 անդամի: Խորհուրդը սահմանում է գենդերի ազգային քաղաքականությունը, իրականացնում է դրա կատարումը և մոնիտորինգը: Խորհրդի նախաձեռնությամբ և աջակցությամբ մշակվեցին գենդերային հավասարության բարելավման օրենսդրություն և փաստաթղթեր: Խորհուրդը ակտիվորեն համագործակցում է կառավարության, ոչ կառավարական և միջազգային կազմակերպությունների հետ:

2014 թվականին Վրաստանի խորհրդարանն ընդունեց «2014-2016 թվականների ազգային գործնական պլան Վրաստանում գենդերային հավասարության ապահովման համար», որը օժանդակում է գենդերային հավասարությանը այնպիսի ոլորտներում, ինչպիսիք եք տեղական ինքնակառավարումը, պատժա-կատարողական և պենիտենցիալ միջավայրի պաշտպանությունը, առողջապահությունը և սոցիալական ապահովագրությունը: Պլանը լիազորում է խորհրդարանային գենդերային հավասարության խորհրդին, օժանդակում է գենդերային հավասարության հետ կապված օրենսդրության ներդաշնակությանը միջազգային չափանիշերի հետ: Նշված ազգային գործնական պլանը նշանակալիորեն նպաստում է կանանց քաղաքական մասնակցությանը, տնտեսական ոլորտում հավասարության ուղղմանը, ինչպես նաև հասարակության կրթության և տեղեկացվածության բարձրացմանը և պարտադիր է դարձնում այն, որ յուրաքանչյուր նախարարություն մշակի կոնկրետ քաղաքականություն և ակտիվություններ, որոնք ապահովեն գենդերային հավասարության պաշտպանությունը: Պլանավորված գործունեությունների կատարման նպատակով նախարարությունները ստանում են ֆինանսավորում:

Ինչո՞ւ պետք է կանայք մասնակցեն քաղաքականությանը:

Երբ կանայք և տղամարդիկ հավասար են ներկայացված, կառավարությունները ավելի ներկայացուցչական և առավել պատասխանատու են ոչ միայն բնակչության մասի, այլև ողջ բնակչության նկատմամբ: Համապատասխանաբար, կանանց ոչ բավարար մասնակցությունը քաղաքականությանը բացասական ազդեցություն է գործում պետության զարգացման և հասարակության վրա: Այս տեսակետից Վրաստանը բացառություն չի հանդիսանում:

Չնայած այն բանին, որ Վրաստանում ընտրություններին կանայք տղամարդկանց նման մասնակցում են, չենք ստանում հավասար քաղաքական ներկայացուցչությունն:Մասնավորապես, 2010 թվականի տեղական ընտրություններում Սակրեբուլոյի կազմում կանանց միայն 10% էր ընտրվել:Մասնավորապես, 1 695 Սակրեբուլոյի կազմում միայն 169 կին էր ներկայացված: 2012 թվականի խորհրդարանական ընտրություններում կանանց միայն 12% էր ընտրվել: Ցուցանիշը 2008 թվականի ընտրությունների համեմատությամբ 6.2% էր բարելավվել, թերևս ընտրովի պետությունում կանանց հավասար ներկայացուցչությունը շատ դանդաղ առաջընթացով իրականացավ: 2013 թվականին 23 նախագահական թեկնածուի շրջանում միայն երեքն էր կին: 2013 թվականին Վրաստանի կառավարության 19 նախարարից չորսը կին էր:

Չնայած Վրաստանում գենդերային հավասարության ազգային քաղաքականության գոյությանը, այնուամենայնիվ չեն նկատվում կանանց նշանակալից փոփոխություններ խորհրդարանում, գործադիր իշխանությունում

կամ տեղական ինքնակառավարման ներկայացուցչության աճի տեսակետից: Կանանց քաղաքականությունում մասնակցության համար բազմաթիվ պատնեշ գոյություն ունի և կարող է լինել ընտրական համակարգերից մեկը[9], ինչպես նաև՝ քաղաքական կուսակցությունների վարքը և կառուցվածքը: Այլ պատնեշներ են կնոջ ընտանիքի նկատմամբ պատասխանատվությունը և կարծիքը այն մասին, որ քաղաքականությունը տղամարդկանց գործն է:

Անհրաժեշտ է գործնական քայլեր կատարել իրատեսական փոփոխություններ իրականացնելու համար երկրում գենդերային հավասարության տեսակետից: Այդ հարցում մեդիան կարող է կատարել նշանակալից դեր: Մեդիայի միջոցով հնարավոր է լայն հասարակության շրջանում բարձրացնել գիտելիքը գենդերային հավասարության նշանակության, որոշումների ընդունման գործընթացում կանանց մասնակցության անհրաժեշտության և դրան ուղեկցող դրական արդյունքների մասին: Ավելին, լավ պլանավորված և իրականացված մեդիագործընթացները կարող են արմատախիլ անել գենդերային կարծրատիպերը, որոնք խոչընդոտող լծակներ են գենդերային հավասարության հասնելու ճանապարհին:

Այն ժամանակ, երբ պետական քաղաքականությունը և մեդիան նշանակալից դեր են խաղում կանանց քաղաքական մասնակցությանը և ներկայացուցչության համար, հասարակության յուրաքանչյուր անդամ, ձեզ նման քաղաքացիները, ձեր ընտանիքի անդամները և բարեկամները պատասխանատու եք ապահովել իսկական գենդերային հավասարություն և բարձրացնել կանանց մասնակցությունը ժողովրդավարական Վրաստանի զարգացման համար: ■

[9] http://www.wedo.org/wp-content/uploads/electoralsystems_5050_factsh3.htm

Գլուխ VI
Մեդիայի դերը ժողովրդավարական հասարակությունում

Ի՞նչ դեր պետք է խաղա մեդիան ժողովրդավարական հասարակությունում: Ինչպե՞ս կարելի է գնահատել աղբյուրը և ինչո՞ւ է կարևոր այն բանի որոշումը, թե արդյոք լրատվությունը հավաստի՞ է և ճի՞շտ:

Ի՞նչ դեր պետք է խաղա մեդիան ժողովրդավարական հասարակությունում:

Ամերիկացի հետազոտող և պետական գործիչ Թոմաս Ջեֆերսոնը մեկ անգամ ասաց. «Ժողովրդավարությունը անհնար է լինի միաժամանակ և՝ տգետ և՝ ազատ»[10]: Թոմաս Ջեֆերսոնը և նրա ժամանակակիցները ըմբռնեցին, որ այն բանի համար, որպեսզի քաղաքացիները ժողովրդավարական հասարակությունում կարողանան պահպանել ազատությունը և պաշտպանեն իրենց իրավունքները, նրանք պետք է տեղեկացված լինեն կարևոր հասարակական հարցերի, քաղաքագետների հայացքների և կառավարության գործունեության մասին: Ամերիկայի «Մարդու իրավունքների Բիլի» I հոդվածում ներկայացված է մի քանի դրույթ, որոնք պետք է ապահովեն այն կարծիքը, որ մեդիան կարող է գործել կառավարությունից անկախ և որ մարդիկ ազատ են արտահայտելու իրենց կարծիքները: Այս դրույթները աջակցում են կարծիքի փոխանակմանը, ինչը անհրաժեշտ է առողջ ժողովրդավարության գոյության համար: Նրանք տալիս են մեդիայի ներկայացուցիչներին հնարավորություն գործելու, հետևելու կառավարությանը և լուսաբանելու կաշառակերության և իշխանության չարաշահման դեպքերը:

Քաղաքացիների իրազեկվածության համար անհրաժեշտ է ազատ և անկախ մամուլի պահպանումը: Թերևս դա քաղաքացիների կողմից նույնպես պահանջում է մեծ պատասխանատվություն: Նրանք պետք է ընդունեն որոշում, թե ում աջակցեն ընտրությունների ժամանակ, ինչպես մասնակցեն հանրաքվեներին, ինչ հարցերի նկատմամբ ցուցաբերեն փաստաբանություն և ինչ նպատակների և ցանկությունների մասին կապվեն իրենց ներկայացուցիչներին տեղական և կենտրոնական կառավարությունում: Այս ամենը արդյունավետորեն իրականացնելու համար անհրաժեշտ է, որ մարդիկ լինեն տեղեկացված: Այս նպատակին հասնելու լավագույն ճանապարհն է միշտ տիրապետել

[10] Illinois Press Association Guide to First Amendment & Access Laws (1995) at http://www.illinoisfirstamendment-center.com/history.php

ճիշտ լրատվությանը ընթացիկ երևույթների կապակցությամբ: Իսկ դրա համար լավագույնը ճիշտ և ընթացիկ լրատվության տիրապետումն է: Պատմության ընթացքում երբեք այսպես հեշտ, արագ և մեծ քանակությամբ լրատվություն մատչելի չի եղել, ինչպես այսօր է դա հնարավոր տեղեկատվական տեխնոլոգիաների և մեդիայի միջոցով: Դրա հետ միասին, լրատվության առատությունը մեծացնում է քաղաքացիների պատասխանատվությունը քննադատաբար գնահատելու աղբյուրները: Մեդիա կրթվածությունը անհրաժեշտ քաղաքացիական ունակություն-սովորություն է 21-րդ դարում: «Մեդիա կրթվածության ազգային ասոցիացիա» ամերիկյան կազմակերպության համաձայն,«մեդիա դարաշրջանում կրթված անձնավորությանը հարկավոր են քննադատական մտածողության ունակություններ, ինչը նրանց կտա հնարավորություններ ընդունելու որոշումներ»[11]:

Մեդիայի քննադատաբար գնահատումը նշանակում է, վերլուծել և գնահատել աղբյուրը և ուղղակիորեն հավաստիաբար չընդունել այն լրատվությունը, ինչը կարդում եք, տեսնում կամ լսում եք: Այսօրվա մրցակցական մեդիա շուկայի առաջնային խնդիրն է գրավել և զվարճացնել լսարանը, ինչը մեծ ազդեցություն է գործում այն բանի վրա, թե ինչպես պետք է գրվի նոր լուրը և ներկայացվի նպատակային լսարանին: Մեդիան կարող է տարբեր ճանապարհներով ներկայացնել փաստեր այս կամ այն հարցի մասին,անգամ այն դեպքում, եթե դրանք հարցի մասին ճիշտ և լրիվ լրատվություն չեն ներկայացնում:

Ինչպե՞ս է կարելի գնահատել աղբյուրը և ինչո՞ւ է կարևոր այն բանի որոշումը, թե արդյոք լրատվությունը հավաստի՞ է և ճի՞շտ:

Շատ տարբերվող կարծիք գոյություն ունի այն մասին, թե ինչու են մարդիկ և կազմակերպություններ մեդիան կիրառում հասարակության հետ հաղորդակցության համար: Այս կամ այն անձի և կազմակերպության նպատակը գլխավոր լծակն է այն հարցի լուծման համար, թե ինչ և ինչպիսի լրատվություն պետք է հաղորդի հասարակությանը: Մեդիայի չորս գլխավոր նպատակն է. արտահայտել տեսակետներ, կրթել, համոզել և զվարճացնել մարդկանց: Երբ մեդիայի նպատակը տեսակետների արտացոլումն է, լրատվության մեջ ներկայացված են անձնավորությունների և կազմակերպությունների հայացքները կամ արժեքները: Երբ խնդիրը կրթությունն է, լրատվությունը համեմատաբար ավելի կողմնորոշված է փաստերի վրա: Մեդիայի կողմից հնչած հաղորդագրությունները միշտ ձգտում են համոզել մարդկանց, ընդունել որևէ հարց և գործել համապատասխանաբար: Օրինակ, աջակցություն ցուցաբերեն հանրային ծառայության թեկնածուին, հատկացնեն գումար բարեգործության համար կամ գնեն որոշակի արտադրանք: Վերջնական նպատակը՝ զվարճությունը, լայնորեն է կիրառված մեդիայում: Իսկ լրատվական կազմակերպությունները, որոնք ցանկանում են ավելի մեծ լսարանի ուշադրություն գրավել, հաճախ կիրառում են այնպիսի տարրեր, որոնք

[11] National Association for Media Literacy, 2013 at http://namle.net/publications/media-literacy-definitions/

զվարճացնում են հասարակությանը: Այդպիսով առավել կարևոր է մեդիայի աղբյուրի նպատակները հասկանալ այն բանի համար, որպեսզի կարողանալ գնահատել աղբյուրը և համապատասխանաբար որոշել, թե որքանով հավաստի և ճիշտ է մատուցված լրատվությունը:

Առաջին քայլը որոշելու համար, թե լրատվությունը ճիշտ և վստահելի՞ է, թե ոչ, անհրաժեշտ է վերստուգել, թե որքանով **ՎԱՍՏԱՀԵԼԻ** է տրված լրատվության աղբյուրը: Աղբյուրի նկատմամբ վստահություն սահմանելու հարկավոր է պատասխանել մի քանի հարցերի.

- Ո՞վ տպագրեց կամ ո՞վ է լրատվության հեղինակը:
- Ի՞նչ է հայտնի հրատարակության կամ հեղինակի մասին:
- Հայտնի է, թե ոչ հրատարակչի/հեղինակի նպատակը կամ խնդիրը:
- Հրատարակիչը կամ հեղինակը ստանո՞ւմ են, թե ոչ որևէ անձնական շահույթ նշված հարց(եր)ին կենտրոնանալուց:
- Ինչպե՞ս է լրատվությունը ձեռք բերվել. վկաների՞ց, փորձագետնե՞րից, ծանո՞թ, թե անծանո՞թ աղբյուրներից:
- Հաստատվու՞մ է, թե ոչ ներկայացված լրատվությունը նաև այլ աղբյուրի կողմից:
- Ո՞վ է ֆինանսավորում աղբյուրը:

Ընդհանուր առմամբ, այս կամ այն հեղինակի/հրատարակիչի մասին շատ սուղ տեղեկատվություն է հասանելի, հիմք է առաջանում մտածելու այն մասին, որ հեղինակը և հրատարակիչը կարող են ունենալ հետաքրքրություն լրատվությունը այս կամ այն տեսանկյունից լուսաբանելու կապակցությամբ: Համապատասխանաբար, նման դեպքում տեղեկատվության վստահելիությունը հարցական նշանի տակ է դրվում: Նմանապես, եթե հեղինակը կամ հրատարակիչը հայտնի է հարցերի նկատմամբ արտահայտված դիրքորոշման և տեսակետի նկատմամբ իր միակամությամբ, կամ եթե լրատվություն ձեռք բերելու ուղիները թափանցիկ չեն, օրինակ, լրատվությունը անանուն աղբյուրի վրա հենվելով է մատուցված, որը հաստատված չէ փաստերով, այս դեպքում վստահելիությունը պետք է դրվի հարցական նշանի տակ: Բոլոր վերը նշված դեպքերում, աղբյուրը կարող է լինել կողմնակալ: Լրատվությունը հավաստիացնելու համար լրացուցիչ աղբյուրների որոնումը ավելի շուտ պետք է լինի լրատվությունը գնահատելուն ուղեկցող գործընթաց, քան թե ընդունենք աղբյուրը որպես ճիշտ և վստահելի: Պարզ եթե ասենք, կողմնակալություն նշանակում է ինչ որ բանի, ի տարբերություն մյուսների, շնորհել առավելություն: Այսպիսի կողմնակալությունը կարող է ազդեցություն գործել այն ուղիների վրա, թե ինչպես է լրատվությունը ներկայացված մեդիա միջոցներում, իսկ սա վերջին հաշվով **ՄԵԴԻԱՆ ԴԱՐՁՆՈՒՄ Է ԿՈՂՄՆԱԿԱԼ:**

Մեդիայի կողմնակալության հետևանքով լրատվությունը խեղաթյուրված ներկայացնելու մի քանի ճանապարհ գոյություն ունի: Այս տակտիկաների հետ ծանոթությունը հարկավոր կլինի աղբյուրի վերլուծության համար: Այս

տակտիկաները պարունակում են բառերի ընտրություն, լրատվության բացթողում, բանավեճերի սահմանափակում, աղբյուրների ընտրություն և կիրառում, լրատվական շրջանակ:

Այս կամ այն երևույթը նկարագրելու համար կիրառված բառերը կարող են երբեմն հիմնավորապես, իսկ երբեմն էլ աննշան փոխել երևույթի նշանակությունը: Տպավորիչ խոսքերի և կոնկրետ ածականների կիրառմամբ հնարավոր է ազդեցություն գործել հասարակության մտքերի և զգացմունքների վրա կոնկրետ հարցերի նկատմամբ: Օրինակ է բերված, թե ինչպես ներկայացրեցին ամերիկական երկու լրատվական գործակալություններ միևնույն երևույթի մասին վերնագրերը: Օրինակը պարզ ներկայացնում է, թե ինչպես կարելի է փոփոխել նշանակությունը **ԲԱՌԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՄԲ:**

«Իրաքի զինված ուժերը կանգնեցնում են ԱՄՆ-ի հետախուզական թռիչքները», The New York Times, 3/11/2003
«ՄԱԿ-ը դուրս է բերում U-2մակնիշի ինքնաթիռները», USA Today, 3/11/2003

„New York Times”-ի վերնագրում Իրաքը ներկայացված է որպես գերակայող ուժ ունեցող կողմ, որը ԱՄՆ-ի հարձակումները «սեփական ուժերով կանգնեցրեց»: Թերևս երկրորդ „USA Today”-ի վերնագիրը հնչում է այսպես. « ՄԱԿ-ը ընդունեց որոշում, կանգնեցնել ինքնաթիռները»և համապատասխանաբար ենթադրվում է, որ այս դեպքում իրավիճակը վերահսկում է ՄԱԿ-ը:

Անձինք, որոնք այս երկու վերնագրերից մեկն ու մեկը կընթերցեն, տարբերվող պատկերացում կձևավորվի նրանց մոտ երևույթի նկատմամբ: Թերևս երկու վերնագրերն էլ ԱՄՆ-ի գխավոր լրագրերում տպագրվեց միևնույն օրը, ճիշտ միևնույն երևույթի մասին: Գիտելիքը այն մասին, թե ինչպես կարող են բառերը փոխել նշանակությունը և ազդեցություն գործել լսարանի վրա, զգացմունքների և արձագանքների խաղարկումը, հանդիսանում է մեդիայի իրավասու գնահատման ունակության զարգացման կարևոր մասը:

Լրատվության ընտրելիությունը տեղեկատվությունը քեզ ցանկալի կոնկրետ տեսանկյունից ներկայացնելու հնարավորություններից մեկն է: Որոշակի լրատվություն բաց **թողնելով,** հասարակությունը զրկվում է այն շանսից, որ հարցը խորությամբ ըմբռնի և գնահատի տարբեր հեռանկարներից: Կարևոր լրատվությունը բաց թողնելու հետևանքով մարդիկ չեն կարողանում կատարել տեղեկացված և փաստարկված եզրակացություններ: Նմանապես, կոնկրետ թեմայի նկատմամբ բանավեճերի, փոխադարձաբար հակասական կարծիքների ամրագրման սահմանափակումը նույնպես ազդեցություն է գործում հասարակական կարծիքի վրա, ներկայացնելով կողմնակալ, միակողմանի կարծիք: Երկու տակտիկայի կիրառման արդյունքը կարող է դառնալ անգամ լրատվության խեղաթյուրում և ապատեղեկատվություն:

Աղբյուրը որոշիչ է, կարևոր և երբեմն զգայուն լրատվություն ընդունելու գործընթացում: Լրագրողները չեն կարող սեփական գործունեությունը իրականացնել առանց այն մարդկանց հետ համագործակցության, որոնք կիսում են նրանց լրատվությունը: Գնահատելու համար՝ թե կողմնակա՞լ է, թե ոչ լրատվությունը, անհրաժեշտ է կոնկրետ կերպով քննարկել լրատվության աղբյուրների մասին: **Աղբյուրները ընտրելիս և կիրառելիս** կարևոր է պատասխանեք հետևյալ հարցերին.

- Հանդիսանու՞մ է, թե ոչ լրատվության աղբյուրը փորձագետ կամ այնպիսի անձ, որը ունի համապատասխան գիտելիք այս կամ այն հարցի կապակցությամբ:
- Ի՞նչ կապ ունի լրատվության աղբյուրը տվյալ հարցի հետ:
- Ունի՞, թե ոչ լրատվության մատակարարողը որևէ անձնական շահ տվյալ հարցի նկատմամբ:
- Քանի՞ աղբյուրի հետ անցկացվեց խորհրդատվություն:
- Եղե՞լ են, թե ոչ տարբեր կարծիքներ ներկայացված:

Լրատվությունը կիսելիս, աղբյուրը կարող է ունենալ իր նպատակները, համապատասխանաբար, աղբյուրի մասին ավելի տեղեկատվության որոնումը տալիս է հնարավորություն, որպեսզի տարբերենք կողմնակա՞լ է, թե ոչ լրատվությունը: Դրա հետ միասին, լրատվություն մատակարարողի գիտելիքը այս կամ այն հարցի նկատմամբ կարող է լինել սահմանափակ և համապատասխանաբար չլինել միանգամայն ճիշտ: Վերևում տրված հարցերի հաշվառումը անհրաժեշտ է գնահատելու համար, թե որքանով վստահելի է այս կամ այն լրատվությունը:

Լրատվական շրջանակ ձևավորելիս որոշում է ընդունվում այն մասին, թե ինչպես ներկայացվի լրատվությունը, որպեսզի այն գրավի կոնկրետ լսարանին, ազդեցություն գործի և հրահրի տարբեր գործողություններ: Այս դեպքում կիրառված տեխնիկաներից մեկը ձայնի տոնն է, որով էլ փոխանցվել է լրատվությունը: Օրինակ, լրատվությունը ներկայացված է պարզ, սովորական մանևրով, որը և ստեղծում է լրջության զգացում, եթե այն ներկայացված է որպես հետաքրքիր մեկնաբանություն մարդու վարքի մասին: Հասարակության վրա ազդեցություն գործելու նպատակով գոյություն ունեն լրատվությունը փոխանցելու տարբեր միջոցներ: Օրինակ, լրագրի առաջին էջում տպագրված լուրերը, որպես օրենք, համարվում են առավել կարևոր, քան այն լուրերը, որոնք համեմատաբար ետին էջերում են ներկայացված: Նմանօրինակությամբ, ժամանակը, որն էլ մեդիան այս կամ այն հարցի լուսաբանմանն է զիջում, նույնպես նշանակալի ազդեցություն է գործում հասարակության վերաբերմունքի վրա և ընդգծում է թեմայի նշանակությունը: Լրատվության ձևավորումը կարող է տեղի ունենալ նաև տարբեր հեռանկարներից: Օրինակ, լրատվությունը միջազգային տիեզերական կայանի մասին կարող է լուսաբանված լինել միանգամայն տարբեր տեսանկյունից, ինչպես, օրինակ, ազգերի միջև համագործակցության ապացույց, կամ ընդգծվի այն թերությունը, որն էլ գիտության մեջ գոյություն ունի գենդերային ուղղությամբ, կամ ընդհանրապես առաջ

քաշվի այնպիսի թեմա, ինչպիսին է ուժերի անհավասարակշռությունը աշխարհում: Յուրաքանչյուր տեղեկատվության ձևավորման նմուշը մղում է հեղինակին բաց թողնել կամ ընդհակառակն, ձեռք բերել միանգամայն տարբերվող տեսակի լրատվություն և հասարակության ուշադրությունը կենտրոնացնել կոնկրետ հարցի միանգամայն այլ տեսանկյան վրա:

Այն, թե ինչ տեսանկյունից է ներկայացված հարցը՝ ազդեցություն է գործում այն բանի վրա, թե ինչպես է լսարանը ընդունում լրատվությունը: Եթե կոնկրետ ունկնդիրը լրատվության մեջ իրեն հետաքրքրող պահեր տեսնի, նա կստանա նաև պատշաճ լրատվություն, սակայն հաճախ տեղի է ունենում նաև հակառակը, երբ մարդը տեսնում է, որ առաջարկված տեսանկյունից այս լրատվությունը իր համար հետաքրքիր չէ և հնարավոր է դա ընդհանրապես անտեսվի: Այն բանի ըմբռնումը, որ լրատվությունը որոշակի շրջանակի մեջ է տեղադրված, լինի դա հեղինակի, խմբագրի, հրատարակչի, բլոգերի, կայք-էջի ադմինիստրատորի, թե լրատվության պատրաստմանը ընդգրկված այլ անձի կողմից, շատ կարևոր է մեդիայի իմացության գնահատման համար անհրաժեշտ ունակություն-սովորությունների զարգացումը: Տեղեկատվական շրջանակի ընկալմամբ, մարդը գիտակցում է այն, թե որքանով կողմնակալ, կամ էլ խեղաթյուրված կարող է լինել այս կամ այն լրատվությունը: Ճիշտ այս շրջանակների ետևում նայելը և անհրաժեշտության դեպքում ավելի լրատվության որոնումը հնարավոր է դարձնում այն, որ մարդը լինի ավելի իրազեկված որոշակի թեմաների կապակցությամբ:

Հավաստիացում & քարոզում – ինչպես արդեն նշեցինք, երբեմն մեդիայի կողմից կիրառված աղբյուրի նպատակն է հավաստիացնել հասարակությանը այս կամ այն հարցում և կոչ անել որևէ գործողություն կատարելու կողմը: Հաճախ նման դեպքերում կիրառվում է նաև քարոզչությունը, որը ինչպես պարզվեց, հասարակության վարքի և մտածողության վրա ազդեցություն գործելու համար բավականին արդյունավետ միջոց է: Այս նպատակին հասնելու համար մի քանի ուղի գոյություն ունի: Իսկ ավելի հաճախ դիմում են մի քանի մեթոդների: Դրանք են[12].

Վկայություն. ուժեղ հայտարարություն ներկայացված որպես փաստ, (որը հնարավոր է անպայմանորեն չհամապատասխանել իրականությանը), որը նկարագրում է ինչ-որ բան, որպես առանձնահատուկ, լավագույն և այլն: Չնայած այն բանին, գոյություն ունի՞, թե ոչ փաստը հաստատող կայուն փաստարկ: Օրինակ, մաքրող միջոցների գովազդը, որը հաստատում է, որ «ավելի լավ ոչ մի միջոց չի մաքրում»:

Մեծամասնության կարծիք. ներկայացված լրատվությունը ունկնդրին հավաստիացնում է, որ մի կողմը, կոնկրետ անձը կամ այս կամ այն արտադրանքը ճիշտ ընտրություն է, քանզի այն աջակցում է մարդկանց մեծ թվաքանակություն: Օրինակ, հայտարարություն, որ «բնակչության մեծամասնությունը աջակցում է այս կարծիքին»: Այս տեսակ հայտարարության հետ կապված հիմնախնդիրը այն է, որ ոչ ոք չի պարզաբանում, թե քանի մարդու կարծիք են հարցրել, ովքեր

[12] Oracle ThinkQuest, Education foundation, 2001. Propaganda Techniques, at http://library.thinkquest.org/C0111500/proptech.htm

են այդ մարդիկ, հո՞ չի համոզել որևէ մեկը հարցմանը մասնակցող մարդկանց, որպեսզի նման պատասխաններ տան և ընդհանրապես ինչ է նշանակում «մեծամասնություն»:

ՇԼԱԾՈՒԾՈՂ ԶՈՒԳՈՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ – դեպք, երբ բարձր գաղափարների հետ կապված բառերը և հայեցակարգը տրված հարցի կապակցությամբ, կապում են կոնկրետ անձի կամ արտադրանքի հետ: Օրինակ, քաղաքական թեկնածուի մասին կարելի է գրել, որ նա «արդարության կողմն է»: Ճիշտ է, այս դեպքում բացատրված չէ, թե կոնկրետ ինչ հարցում է արտահայտվում թեկնածուի կողմից արդարության նկատմամբ աջակցությունը, թերևս ինքը արդարություն հասկացությունը բավական արժեքավոր է և հեշտ, որ դրա միջոցով այս հասկացության հետ զուգորդված թեկնածուն նույնպես ձեռք կբերի աջակցություն:

ԱՆՎԱՆ ՀՈՉԱԿՈՒՄ – դեպք, երբ անպատվաբեր լեզու կամ բացասական նշանակություն ունեցող բառեր են կիրառվում կոնկրետ մարդու, արտադրանքի կամ երևույթի նկատմամբ այն բանի համար, որպեսզի նպաստեն հասարակությունում բացասական հուզումների առաջացմանը: Օրինակ, կազմակերպության կամ անհատի նկատմամբ այնպիսի մակդիրի կիրառումը, ինչպիսին է «իշխանության ծարաված», մարդկանց մոտ բացասական զուգորդություններ է առաջացնում:

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԱՄԱՆՈՒԹՅՈՒՆ՝ բառեր և արարքներ են կիրառվում հասարակության անդամներին հավաստիացնելու համար, որ այս մարդը, կազմակերպությունը կամ արտադրանքը ճիշտ նրանց կարիքներին և հետաքրքրություններին են ծառայում: Շարքային քաղաքացիներին հավաստիացնում են, որ նրանց կարծիքները և կարիքները հասկանալի են և հաշվի կառնվեն: Այդպիսի բան հնարավոր է կատարվի այն դեպքում, երբ որևէ բարձրպաշտոնյա ձգտում է հավաստիացնել հասարակությանը, որ ինքը սովորական մարդ է, չնայած այն բանին, որ շատ հարուստ է և հետևաբար ազատ է այնպիսի ամենօրյա հոգսերից, ինչպիսիք են մթերքների համար խանութ գնալը, հասարակական տրանսպորտով ուղևորությունը և այլն:

ԿԱՐԾՐԱՏԻՊԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄ. Դա այն դեպքն է, երբ փորձում են ազդեցություն գործել մարդկանց վրա, ներկայացնելով կոնկրետ մարդուն կամ արտադրանքը բացասական մի շարք արտաքին բնութագրիչների կամ որոշակի խմբի ասոցիացիաների պատճառով: Բացասական ընկալումը հիմնականում հենվում է ընդհանրացման վրա, որը հաճախ կարող է ուռճացած կամ ոչ ճիշտ լինել: Նման տակտիկայի նպատակը ծառայում է նշանակալից հարցից հասարակության ուշադրությունը տեղափոխելուն, առաջացնելով կասկած և վախ այս կամ այն հարցի նկատմամբ որոշակի կարծրատիպերի միջոցով: Օրինակ, երբ անձնավորությունը կոնկրետ աշխատանքի վրա չէ, քանզի այս մարդը պատկանում է այնպիսի ազգային խմբի, որը հայտնի է նվազ պատվախնդրությամբ և ծույլ բնավորությամբ:

ԵՐԱՇԽԱՎՈՐԱԿԱՆ՝ երբ հայտնի մարդը բացահայտ ամրագրում է իր աջակցությունը այս կամ այն կազմակերպության, արտադրանքի կամ կոնկրետ մարդու նկատմամբ և նրա նկատմամբ (հայտնի մարդու) հասարակությունում գոյություն ունեցող հարգանքը և դրական տրամադրվածությունը կիրառում է մարդկանց կարծիքի վրա ազդեցություն գործելու համար: Դրա լավ օրինակ է, երբ հայտնի մարդը մասնակցում է որևէ արտադրանքի գովազդին:

Չնայած այն բանին, թե քարոզչության որ մեթոդը կլինի կիրառված, նպատակը հիմնականում մեկն է, դա ազդեցություն գործելն է մարդկանց կարծիքների և գործողությունների վրա այն լրատվության կիրառմամբ, որոնք կարող են հաճախ չլինել նշանակալից և համապատասխան տրված հարցերին: Այս մեթոդները հասկանալը և իմացությունը նշանակալի է, որպեսզի լրատվություն ստանալիս հասնենք դրանց նույնականացման և հեշտությամբ չընկնենք դրա ազդեցության ներքո: Քարոզչության ազդեցությունից պաշտպանվելու ամենալավ միջոցն է. առաջինը՝ վերլուծության ենթարկեք կիրառված մեթոդը, իսկ հետո անցնեք հետևյալ փուլերը.

1) Փորձեք առանձնացնել միմյանցից հուզումները և տպավորիչ բառերը իրատեսական փաստերից,
2) Քննարկեք ներկայացված փաստարկներով և լրատվության որակով և ոչ թե կիրառված լեզվով, տեսողական նյութով և այն անձանցով, ովքեր ներկայացնում են լրատվությունը,
3) Եղեք մոտիվացված, որպեսզի մինչև եզրակացություններ կատարելը գտնեք ավելի շատ լրատվություն կոնկրետ հարցի կապակցությամբ: ■



Ժողովրդավարության սկզբունքներ

Քաղաքացիների մասնակցություն - Ճիշտ է, ընտրություններին մասնակցությունը քաղաքացու գլխավոր պատասխանատվություններից մեկն է համարվում, թերևս իրականում, այն միայն մեկ ուղի է, որով քաղաքացին ժողովրդավարական հասարակությունում կարող է ազդեցություն գործել ընթացող գործընթացների վրա: Լինել տեղեկացված և ունենալ քո դիրքորոշումը մի շարք հարցերի նկատմամբ, արտահայտել աջակցություն այս կամ այն հարցի նկատմամբ տարբեր հասարակական խմբի կամ ասոցիացիային անդամագրվելով,խնդրագիր ստորագրելով, քաղաքագետներին նամակ գրելով, ինչպես նաև տարբեր հասարակական հավաքներին կամ խաղաղ և բողոքի գործողություններին մասնակցությամբ, այս ամենը կարևոր մեխանիզմներ են ժողովրդավարական հասարակությունում սեփական դիրքորոշումը ամրագրելու համար: Այն դեպքերում, երբ հասարակությունը ընթացիկ գործընթացներից մեկուսացված է, ստուգման և հավասարակշռման համակարգի հիմնական տարրերը կորչում են և հանրային գործիչները կարող են զգալ լրիվ ազատություն և գործեն առանց սահմանափակումների: Իսկ սա կարող է հանրային գործիչներին և կառավարության ներկայացուցիչներին մղել գործելու սեփական շահերի օգտին,

ինչը իր հերթին ուղղված չի լինի հասարակական բարեկեցության ապահովման կողմը և հնարավոր է դառնա նաև մարդկանց իրավունքների խախտման պատճառ:

Հաշվետու լինելու պարտավորություն – Պատասխանատվություն և ետադարձ կապ ընդունած որոշումների և կատարած քայլերի կապակցությամբ: Առաջնորդները հաշվետու լինելու պարտականություն են կրում քաղաքացիների առջև, ինչպես նաև կառավարության այլ ճյուղերի նկատմամբ, ներառյալ խորհրդարանը և դատարանը: Հաշվետու լինելու պարտականությունը մղում է կառավարությանը ընդունել որոշումներ և գործել ժողովրդի կամքի համաձայն:

Օրենքի գերակայություն – սա ամենակարևոր սկզբունքներից մեկն է ժողովրդավարական հասարակությունում, քանզի այս սկզբունքի համաձայն, ոչ ոք կանգնած չէ օրենքից բարձր, բոլորը պարտավոր են պաշտպանել օրենքը և հավասարապես կրել պատասխանատվություն օրենքը խախտելու դեպքում:

Ուժի ջարաշահման վերահսկում – Իշխանության ներկայացուցիչները սահմանափակված են իշխանությունը չարաշահելու տեսանկյունից և այս ուղղությամբ նրանց վերահսկում են քաղաքացիները, օրենսդրությունը և տարբեր ինստիտուցիաներ: Այս սկզբունքի կարևորագույն տեսակետը ներկայացնում է «Ստուգման և հավասարակշռության» ամուր համակարգը, ինչը ենթադրում է իշխանության սահմանադրական վերաբաշխում, պետական ճյուղերի միջև իրավասությունների և պատասխանատվությունների վերաբաշխում (գործադիր իշխանություն՝ նախագահ, դատական իշխանություն – դատարաններ և օրենսդիր իշխանություն՝ խորհրդարան):

Մարդու իրավունքներ – Մարդու կյանքի և մարդկային արժանապատվության նկատմամբ հարգանք երբ մարդու իրավունքները խախտվում են, մարդիկ չունեն հավատարմության զգացում կառավարության նկատմամբ: Ճիշտ է, նշանակալից է այն, որ քաղաքացիները զիջեն իշխանության մասը ժողովրդավարորեն ընտրված կառավարության օգտին, թերևս կառավարությունը գոյություն ունի այն բանի համար, որպեսզի ապահովի քաղաքացիների իրավունքների պաշտպանությունը:

Հավասարություն – ամեն մարդ, որպես հասարակության անդամ, արժեվորված է հավասարաչափորեն: Բոլորը պետք է ունենան հավասար հնարավորություններ և արդարադատության իրավունքներ: Ոչ մեկը չպետք է լինի խտրականության ենթարկված ռասայի, կրոնի, ազգային խմբին պատկանելության, գենդերային կամ սեռական կողմնորոշման պատճառով:

Իրավունքների բիլլ – Բոլոր մարդկանց իրավունքները և ազատությունները երկրում պաշտպանված են: Շատ ժողովրդավարական երկրների Սահմանադրություն պարունակում է իրավունքների բիլլ և ապահովում է այս իրավունքների պաշտպանությունը:

Կանոնակարգված, ազատ և արդարացի ընտրություններ

— Կանոնակարգված ընտրությունները կարևոր են, որպեսզի քաղաքական առաջնորդները լինեն հաշվետու այն ժողովրդի առջև, ում ծառայում են: Ազատ և արդարացի ընտրությունների բաղկացուցիչը նաև այն է, որ հասարակության անդամներն ունենան հանրային ծառայությունում ընտրության հնարավորություն, ինչը կրճատում է հարուստ կամ կառավարող դասի իշխանությունը: Դա հանդիսանում է ժողովրդավարական հասարակությունում ժողովրդի և քաղաքագետների անհրաժեշտությունը խաղաղ ընդունելու ժողովրդավարորեն անցկացված ընտրությունների արդյունքը:

Բազմակուսակցական համակարգեր – Այն բանի համար, որպեսզի ընտրությունները արտացոլեն ժողովրդավարական գաղափարներ և ընդդիմադիր հայացքներ, պետք է գոյություն ունենա բազմակուսակցական համակարգ, քանզի միայն բազմակուսակցական համակարգի գոյության դեպքում ժողովուրդը կհասկանա ընդդիմադիր հայացքները և թեկնածու(ներ)ին կտրվի ընտրության հնարավորություն:

Տնտեսական ազատություն – Ժողովրդավարական համակարգում ընդհանրապես ընդունված է, որ կառավարությունը պետք է թույլ տա մասնավոր սեփականության, բիզնեսի և աշխատանքի ազատ ընտրության իրավունք, չնայած այն բանին, թե որքանով է տնտեսությունը կարգավորվում կառավարության կողմից, որակը տարբերվում է երկրների համաձայն:

Քաղաքական հանդուրժողականություն – Յուրաքանչյուր անհատ, անգամ այն ժամանակ, երբ նա ներկայացնում է փոքրամասնության կարծիքը, պետք է ունենա կարծիքը ամրագրելու և գործելու ազատություն: Դրա հետ միասին, դա չպետք է կատարվի փոքրամասնությունների խմբերը նեղացնելով:Նրանց կարծիքները պաշտպանված պետք է լինեն օրենքի կողմից անգամ այն ժամանակ, եթե այն հասարակության մեծ մասի կողմից անընդունելի է: Անհրաժեշտ է, որ փոքրամասնության խմբերի կարծիքները հաշվի առնվեն, որպեսզի սկզբից ևեթ խուսափվի «մեծամասնության դաժանությունը», այնպիսի հասարակություն, որտեղ միայն մեծամասնության կարծիքները և շահերն են ներկայացված:

Թափանցիկություն – Հասկացությունը ենթադրում է, որ քաղաքացիները հնարավորություն ունենան ստանալու տեղեկատվություն այն մասին, թե ինչ որոշում է ընդունվում, ով է այն ընդունում և ինչու: Շատ ժողովրդավարական պետությունում, որոշ որոշումների ընդունումը կատարվում է միայն այն բանից հետո, երբ հասարակությանը տրվում է հնարավորություն արտահայտելու սեփական կարծիքը նախաձեռնած օրենքի մասին: Դա կատարել հնարավոր է հանրային հանդիպումների և կառավարության ներկայացուցիչների հետ հարաբերության ուղիով: ■

Անհրաժեշտ միջոցներ և հղումներ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

www.president.gov.ge – Վրաստանի նախագահ

www.parliament.ge – Վրաստանի խորհրդարան

www.government.gov.ge – Վրաստանի կառավարություն

www.abkhazia.gov.ge – Աբխազիայի Ինքնավար Հանրապետության կառավարություն

www.ajara.gov.ge – Աջարիայի Ինքնավար Հանրապետության կառավարություն

www.mfa.gov.ge – Վրաստանի արտաքին գործերի նախարարություն

www.mrdi.gov.ge – Տարածաշրջանային զարգացման և ենթակառույցի նախարարություն

www.eu-nato.gov.ge – Պետական նախարարի աշխատակարգ եվրոպական և եվրատլանտյան կառուցվածքներին ինտեգրման հարցերով

www.mod.gov.ge – Վրաստանի պաշտպանության նախարարություն

www.moh.gov.ge – Վրաստանի աշխատանքի, առողջապահության և սոցիալական պաշտպանության նախարարություն

www.rs.ge – Եկամուտների ծառայություն

www.minenergy.gov.ge – Վրաստանի էներգետիկայի նախարարություն

www.police.ge – Ներքին գործերի նախարարություն

www.saagento.security.gov.ge – Ներքին գործերի նախարարության սպասարկումների գործակալություն

www.mof.ge – Վրաստանի ֆինանսների նախարարություն

www.is.ge – Վրաստանի ֆինանսների նախարարության հետաքննական ծառայություն

www.economy.ge – Վրաստանի տնտեսության և կայուն զարգացման նախարարություն

www.privatization.ge – Պետական գույքի ազգային գործակալություն

www.msy.gov.ge – Վրաստանի սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն www.mcs.gov.ge – Վրաստանի մշակույթի և հուշարձանների պահպանության նախարարություն

www.mcla.gov.ge – Վրաստանի պատժա-կատարողական և պրոբացիայի նախարարություն

www.mra.gov.ge – Վրաստանի բռնագրավված տարածքներից բռնի տեղաշարժված անձանց, վերաբնակեցման և տարհանվածների նախարարություն

www.constcourt.ge – Վրաստանի Սահմանադրական դատարան

www.cra.gov.ge – Պետական սերվիսների զարգացման գործակալություն

www.napr.gov.ge – Հանրային ռեեստր

www.cec.gov.ge – Կենտրոնական ընտրական հանձնաժողով

www.procurement.gov.ge – Մրցակցության և պետական գնումների գործակալություն

www.justice.gov.ge – Վրաստանի արդարադատության նախարարություն

www.psh.gov.ge – Արդարադատության տուն

www.hcoj.gov.ge – Վրաստանի արդարադատության գերագույն խորհուրդ

www.nbe.gov.ge – Վրաստանի արդարադատության նախարարության գործադիր ազգային բյուրո

www.moa.gov.ge – Վրաստանի գյուղատնտեսության նախարարություն

www.csb.gov.ge – Հանրային ծառայության բյուրո

www.notary.ge – Վրաստանի նոտարների պալատ

www.geostat.ge – Վրաստանի վիճակագրության ազգային ծառայություն

www.apa.gov.ge – Պաշտպանված տարածքների գործակալություն

www.nala.ge – Վրաստանի տեղական ինքնակառավարման ազգային ասոցիացիայի կայք-էջում տեղադրված է Վրաստանի ինքնակառավարվող քաղաքների և մունիցիպալիտետների կայք-էջերի հղումները

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԼԻԿԵՐ և ՈՉ ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԵՐ.

www.matsne.gov.ge – Վրաստանի օրենսդրական տեղեկատու

www.e-government.ge – էլեկտրոնային կառավարական ռեսուրսներ

www.library.court.ge – Իրավական էլեկտրոնային գրադարան

www.nplg.gov.ge – Վրաստանո խորհրդարանի ազգային գրադարան

www.my.gov.ge – Պետական սերվիսների էլեկտրոնային պորտալ

www.partiebi.ge – Ընտրողների տեղեկատվական կայք-էջ

www.electionsportal.ge – Վրաստանի ընտրությունների պորտալ

www.ivote.ge – Ամեն ինչ ընտրությունների մասին

www.transparency.ge – Միջազգային թափանցիկություն - Վրաստան

www.isfed.ge – Արդարացի ընտրությունների և ժողովրդավարության միջազգային ընկերություն

www.gyla.ge – Վրաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա

www.econpolicyfact.ge – Քաղաքական կուսակցությունների սոցիալ-տնտեսական ծրագրեր

www.humanrights.ge – Պորտալ մարդու իրավունքների մասին

www.cems.ge – Քաղաքացիական մոնիտորինգի էլեկտրոնային համակարգ

www.tolerantoba.ge – Ժողովրդական պաշտպանին կից գործող հանդուրժողականության կենտրոն

www.ewmi-gpac.org – Արևելք-արևմուտք մենեջմենտի ինստիտուտ

www.civitas.ge – Կիվիտասգեորգիկա (ուղեցույց մանկավարժների համար)

www.media.ge - Ինտերնյուս

www.civil.ge – Նորություններ Վրաստանից

www.ginsc.net – Գենդերի տեղեկատվական ցանց Հարավային Կովկասում

www.facebook.com – Գենդերային հավասարության ցանց

www.facebook.com – Լրագրողների ցանց գենդերային հավասարության համար

www.greenadvocacy.net – Վրաստանի հասարակական կազմակերպությունների ցանց շրջակա միջավայրի պահպանության և սոցիալական արդարության համար

www.helpinghand.ge – Կամավորության գրանցում

www.volunteering.ge – Կամավորների տեղեկատվական կենտրոն



This civics guide is made possible by the support of the American people through the United States Agency for International Development's (USAID's) Increased Trust in the Electoral Process (ITEP) project, implemented by the International Foundation for Electoral Systems (IFES). The contents do not necessarily reflect the views of IFES, USAID or the United States Government.

Այս քաղաքացիական ուղեցույցի հրատարակումը հնարավոր դարձավ ամերիկացի ժողովրդի աջակցությամբ Ամերիկայի Միացյալ Նահանգների միջազգային զարգացման գործակալության (USAID-ի) միջոցներով: Նյութի բովանդակությունը կարող է չարտահայտել IFES-ի, USAID-ի և Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության տեսակետները:

Դիզայն՝ Մանանա Արաբուլի / zangodesign;
Նկարարզարդում՝ Մայա Աբաշիձե
Տպագրվել է CEZANE հրատարակչությունում
Թբիլիսի 2014

© 2014 International Foundation for Electoral Systems (IFES). All rights reserved.
© 2014 IFES. Բոլոր իրավունքները պաշտպանված են:

ISBN